



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Գ» ԿԵՏԻ, 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2.1-ԻՆ ՄԱՍԻ, 52.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 1-3-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

12 մարտի 2026 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը՝ կազմով.

նախագահող՝
դատավորներ՝

Արման Դիլանյանի,
Արտակ Զեյնալյանի,
Դավիթ Խաչատրյանի,
Երվանդ Խունդկարյանի,
Հովակիմ Հովակիմյանի,
Էդգար Շաթիրյանի,
Սեդա Սաֆարյանի,
Արթուր Վաղարշյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ նաև՝ Դիմող),

ներկայացուցիչներ՝

Ազգային ժողովի պատգամավոր Արծվիկ Մինասյանի,
փաստաբան Արամ Վարդևանյանի,

պատասխանողի՝

Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող),

ներկայացուցիչներ՝

Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Մարի Ստեփանյանի և նույն վարչության պետի տեղակալ Էլեն Մնացականյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին մասի, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, Պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, վերլուծելով վիճարկվող և վերջիններիս հետ փոխկապակցված այլ օրինադրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Վարույթը Սահմանադրական դատարանում

1. Գործի քննության առիթն Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի՝ 2025 թվականի հուլիսի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով խնդրել է. «(...) որոշել ՀՀ «Էներգետիկայի մասին» օրենքի (ՀՕ-148) 17-րդ հոդվածի 1-ին մասի գ) ենթակետի¹, 27-րդ հոդվածի 2.1-րդ և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-րդ հոդվածի և ՀՀ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 59-րդ, 60-րդ, 73-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Սահմանադրական դատարանի 2026 թվականի մարտի 12-ի ՍԴԱՌ-32 աշխատակարգային որոշմամբ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Էներգետիկայի մասին» օրենքի

¹ Սույն հոդվածը մասերով համարակալված չէ, ուստի՝ վիճարկվող դրույթը խնդրո առարկա օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետն է:

17-րդ հոդվածի «գ» կետի, 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասի, 52-րդ հոդվածի, 52.1-ին հոդվածի 4-10-րդ մասերի մասով, գործի վարույթը կարճվել է:

3. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001 թվականի մարտի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2001 թվականի մարտի 21-ին և ուժի մեջ է մտել 2001 թվականի ապրիլի 1-ին:

Օրենքի՝ «**Հանձնաժողովի իրավասությունները**» վերտառությամբ 17-րդ հոդվածի «գ» կետով սահմանված է.

«Հանձնաժողովն իրավասու է՝

(...)

գ) իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում՝ տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը և կիրառելու սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները»:

Նշյալ դրույթը շարադրվել է նոր խմբագրությամբ 07.02.2018 թ. ՀՕ-100-Ն օրենքով, փոփոխվել՝ 18.11.2021 թ. ՀՕ-365-Ն օրենքով:

4. Օրենքի՝ «Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքների սահմանափակումը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված է.

«2.1. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված գործարք իրականացնելու մտադրության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունք ունի: Սույն մասով սահմանված նախապատվության իրավունքի իրացման նպատակով լիցենզիա ունեցող անձը ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը համապատասխան գործարք իրականացնելու մտադրության

մասին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է օգտվել իր նախապատվության իրավունքից նշված ծանուցումն ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում՝ լիցենզիա ունեցող անձին ծանուցելով այդ մասին: Նախապատվության իրավունքը իրացնելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ»:

Իսնդրո առարկա դրույթները հիշատակված հոդվածում լրացվել են 03.07.2025 թ. ՀՕ-196-Ն օրենքով, որն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ²:

5. Օրենքի՝ «Ապառոզների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառումը» վերտառությամբ 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված է.

«1. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ: Կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

2. Սույն հոդվածով սահմանված կարգով հանձնաժողովի նախագահը իրավասու է կիրառելու հետևյալ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը միասին.

1) սահմանել առերևույթ խախտումների կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել իրականացնել դրանով սահմանված միջոցները.

2) հրավիրել լիցենզավորված անձի կառավարման մարմինների նիստեր (ժողովներ)՝ հանձնաժողովի նախագահի սահմանած օրակարգով.

3) պահանջել հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կանոնադրության փոփոխություն և դիմել պետական ռեգիստր կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումն ապահովելու նպատակով.

² ՀՕ-196-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա:

4) պահանջել հանձնաժողովի նախագահի սահմանած ժամկետում կատարել լիցենզավորված անձի կառավարման մարմինների անդամի կամ անդամների փոփոխություն.

5) նշանակել լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ:

3. Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ և նրա գործունեության ամբողջ ընթացքում նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի լիցենզավորված անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմիններն իրենց իրավասությունները (լիազորությունները) իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ»:

Սույն օրենքը լրացվել է 52.1-ին հոդվածով՝ 03.07.2025 թ. ՀՕ-196-Ն օրենքով:

6. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի հունվարի 17-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի փետրվարի 14-ին:

Նշված օրենքի՝ «**Հանրային ծառայությունների ոլորտում հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդման կամ դիմում-բողոքի քննարկման կարգը**» վերտառությամբ 36-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված է.

«9. Կառավարության լիազոր մարմնի հաղորդման առկայության դեպքում, որով առերևույթ հիմնավորվում է, որ վրանգվել է կամ կարող է վրանգվել էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաղորդումը ստանալուց հետո՝ հինգօրյա ժամկետում, հարուցվում է վարչական վարույթ: Վարչական վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող են կիրառվել

«Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումները: Սույն մասով սահմանված դեպքում չեն կիրառվում սույն հոդվածով նախատեսված այլ կարգավորումները: Հանձնաժողովի նախագահի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա է անհապաղ կատարման, և դրա բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը»:

Նշված օրենքի 36-րդ հոդվածը լրացվել է 9-րդ մասով՝ 03.07.2025 թ. ՀՕ-195-Ն օրենքով, որն ունի անցումային դրույթ³:

2. Դիմողի դիրքորոշումները

7. Դիմողը՝ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, վկայակոչելով «Էներգետիկայի մասին» **օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը**, գտնում է, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ստացել է լիազորություն՝ ուղղակիորեն դադարեցնելու լիցենզիան՝ առանց դատարան դիմելու: Ըստ Դիմողի՝ դատական կարգի նման շրջանցումը՝ տվյալ պարագայում Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ դատական կարգով սեփականությունից զրկելու պահանջի խախտում է:

8. Դիմողի համոզմամբ՝ առանց լիցենզիայի տնտեսվարող սուբյեկտը, ձևական առումով պահպանելով իր գույքը, ընդհանրապես չի կարող այն օգտագործել իր ֆունկցիոնալ նպատակին համապատասխան, ուստի՝ տվյալ պարագայում գույքի օգտագործման իրավազորության վերացումը հավասարազոր է սեփականությունից զրկելուն: Դիմողը պնդում է, որ Էներգետիկայի ոլորտում գործող ընկերությունների լիցենզիաները ևս պետք է դիտարկվեն որպես սեփականության իրավունքի օբյեկտ, իսկ քանի որ լիցենզիայից զրկումը հանդիսանում է սեփականությունից զրկում, ապա Հանձնաժողովին առանց դատարան դիմելու լիցենզիայի գործողությունը դադարեցնելու լիազորության ընձեռումը հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասին, և բացի դրանից, Հանձնաժողովի կողմից լիցենզիայի դադարեցման դեպքում չկա արդյունավետ դատական վերահսկողության կառուցակարգ:

³ ՀՕ-195-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ» վերտառությամբ 2-րդ մասով սահմանված է. «Սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա»:

9. Անդրադառնալով Օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին և 2.2-րդ մասերի սահմանադրականության հարցին՝ Դիմողը գտնում է, որ էներգետիկայի ոլորտի տնտեսվարող սուբյեկտի բաժնեմասերի և ակտիվների նկատմամբ Կառավարության ընդհանուր նախապատվության իրավունքի դրույթն անհամատեղելի է Սահմանադրության հետ, քանի որ անհամաչափորեն միջամտում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին: Ըստ Դիմողի՝ Կառավարության օգտին նախապատվության իրավունքի սահմանումն անհրաժեշտ միջոց չէ, քանի որ նշյալ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն արդեն իսկ նախատեսում են ոլորտի համար պատասխանատու Հանձնաժողովի իրավասությունը՝ նախապես տալու իր համաձայնությունը նախատեսվող գործարքներին՝ Հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոնների համաձայն: Կառավարության նախապատվության իրավունքը համարժեք չէ նաև տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին, քանի որ այն խաթարում է վստահությունը սեփականության և ներդրումների պաշտպանության նկատմամբ:

10. Դիմողը գտնում է, որ առանց նպատակի հստակության՝ Կառավարության օգտին նախապատվության իրավունքի սահմանումը՝ որպես միջոց, պիտանելիության խնդիրներ ունի: Այն նաև «(...) անհրաժեշտ միջոց չէ, քանի որ այդ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը արդեն իսկ նախատեսում են ոլորտի համար պատասխանատու հանձնաժողովի իրավասությունը՝ նախապես տալու իր համաձայնությունը նախատեսվող գործարքներին (...)»: Դիմողի գնահատմամբ՝ «Հանձնաժողովի կողմից նախապես համաձայնություն տալու գործիքն ավելի մեղմ և միաժամանակ արդյունավետ գործիք է, (...) Կառավարության նախապատվության իրավունքը համարժեք չէ նաև տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին, քանի որ խաթարում է վստահությունը սեփականության և ներդրումների պաշտպանության նկատմամբ: Վնասի աստիճանը անհամաչափ է միջամտության օգուտին, ինչը նշանակում է, որ կարգավորումը անհամաչափ է նաև Սահմանադրության 78-րդ հոդվածի 2-րդ նախադասության իմաստով»:

11. Դիմողը գտնում է, որ **Օրենքի 52.1-ին հոդվածով** նախատեսված կանխարգելիչ միջոցառումների կիրառումը վարչական վարույթի փուլում, երբ դեռևս չկա իրավական ուժ ունեցող ակտ, իսկ անձի պատասխանատվությունն իրավական գնահատականի չի ենթարկվել, անհամաչափ միջամտություն է ինչպես սեփականության իրավունքին, այնպես էլ Սահմանադրության 59-րդ հոդվածով երաշխավորված տնտեսական գործունեության ազատությանը:

12. Ըստ Դիմողի՝ Օրենքի 52.1-ին հոդվածով և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասով ներդրված կանխարգելիչ միջոցառումների կիրառումը տեղի է ունենում այնպիսի պայմաններում, երբ ընդհանրապես տնտեսվարող սուբյեկտի մեղավորությունը որևէ կերպ չի փաստվել: Ըստ Դիմողի՝ Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը պահանջում է, որ հիմնական իրավունքի սահմանափակման համար ընտրված միջոցը, պիտանի լինելուց զատ, լինի անհրաժեշտ, այսինքն՝ չկիրառվի ծայրահեղ միջոցը: «Մինչդեռ «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-րդ հոդվածի 2-րդ մասը հանձնաժողովի նախագահին տալիս է հայեցողական լիազորություն՝ ընտրելու սահմանված հինգ միջոցներից մեկը կամ մի քանիսը: Ակնհայտ է, որ այդ միջոցներից առաջինը (սահմանել առերևույթ խախտումների կամ դրանց հետևանքների վերացման ծրագիր և լիցենզավորված անձից պահանջել դրանց իրականացումը) Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին միջամտության ինտենսիվությամբ որևէ կերպ համեմատելի չէ հանձնաժողովի նախագահի՝ ժամանակավոր կառավարիչ նշանակելու կամ լիցենզավորված անձի կանոնադրությունը փոփոխելու պահանջի հետ: Այդուհանդերձ, վիճարկվող օրենքը, առանց ընտրված միջոցների անհրաժեշտության չափանիշի հաշվառման, այդ միջոցներից որևէ մեկի կամ բոլորի միաժամանակ կիրառումը վերապահում է հանձնաժողովի նախագահի հայեցողությանը»:

13. Դիմողը, վկայակոչելով **Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը**, ինչպես նաև 03.07.2025 թ. ՀՕ-196-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը, գտնում է՝ քանի որ մինչ Օրենքի «(...) վերջին փոփոխությունը ընդհանրապես գոյություն չի ունեցել կանխարգելիչ միջոցառումների իրականացման ինստիտուտ, ստացվում է, որ Էներգետիկայի մասին օրենքը ուղղակիորեն հետադարձ ուժ է տվել անձի իրավական վիճակը վատթարացնող դրույթին, քանի որ օրենքի ընդունումից առաջ

ավարտված փաստակազմի վրա (նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը) տարածվում են նոր իրավական հետևանքներ (հիմք են կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար): Ուստի տվյալ պարագայում առկա է օրենքի իրական (իսկական) հետադարձ ուժի կիրառում, ինչը առանց որևէ վերապահման արգելված է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով»:

14. Անդրադառնալով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի սահմանադրականության հարցին՝ Դիմողը փաստում է, որ իշխանությունների բաժանման սկզբունքի և ինքնավար մարմինների անկախության տեսանկյունից խնդրահարույց է նշյալ նորմով սահմանված՝ Կառավարության լիազոր մարմնի հաղորդման հիման վրա ինքնաշխատ կերպով վարչական վարույթի հարուցումը: Միևնույն ժամանակ, Դիմողը գտնում է, որ եթե ընդունելի կարելի է համարել նշյալ նորմի ուժով Կառավարության լիազոր մարմնի կողմից Հանձնաժողովին հաղորդում ներկայացնելու իրավունքը, «ապա այդ դրույթով նախատեսված վարչական վարույթ հարուցելու պարտականությունը Հանձնաժողովի նախագահի կողմից Հանձնաժողովի ինքնավարության և անկախության խախտում է»:

15. Ըստ Դիմողի՝ Հանձնաժողովի նախագահի կողմից միանձնյա կարգով կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին որոշում կայացնելու լիազորությունը հակասում է Հանձնաժողովի կոլեգիալ բնույթին: Դիմողի համոզմամբ՝ Հանձնաժողովի նախագահի լիազորություններն ունեն բացառապես ներքին կազմակերպական և ներկայացուցչական բնույթ և չեն կարող ունենալ որևէ արտաքին ներգործություն, ուստի՝ տվյալ պարագայում հակասում են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

16. Դիմողը կարծում է, որ հաղորդում ներկայացնելիս Կառավարության լիազոր մարմնի վրա դրված է միայն «առերևույթ հիմնավորման» պարտականությունն առ այն, որ «կարող է վտանգվել Էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը», կամ որ «հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման»: Դիմողը գտնում է, որ այդ ձևակերպումներն ակնհայտորեն հակասում են որոշակիության սահմանադրական սկզբունքին, որովհետև որևէ կերպ հասկանալի չէ, թե ինչ է

նշանակում ընդհանրապես «առերևույթ հիմնավորում» եզրույթը: Նույն անորոշությունն է նաև, երբ վիճարկվող դրույթում խոսվում է այն մասին, որ «հավանական խախտումը հանգեցրել է ... մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման»:

17. Դիմողն ամփոփելով եզրակացնում է, որ որևէ հիմնական իրավունքի կենսագործումը ենթադրում է նաև արդյունավետ իրացման խոչընդոտների, սահմանափակումների դեպքում դրանց հաղթահարման, վերացման նպատակով դատական վերահսկողության իրավունքի իրացման հնարավորության նախատեսում: Անձը չպետք է զրկվի իր հիմնական իրավունքների սահմանափակման իրավաչափությունը պատշաճ դատական վերահսկողության առարկա դարձնելու, անկախ և անաչառ մարմնի՝ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքից:

3. Պատասխանողի դիրքորոշումը

18. Պատասխանողը՝ Ազգային ժողովը, վերլուծելով «**Լիցենզավորման մասին**» օրենքով սահմանված իրավակարգավորումները, եզրակացնում է, որ լիցենզիայի գործողության դադարեցումը կատարվում է լիցենզավորող մարմնի դիմումի հիման վրա դատական կարգով, եթե օրենքով սահմանված չեն բացառություններ:

19. Պատասխանողն **Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետով** սահմանված համապատասխան իրավակարգավորումները դիտարկում է որպես այդպիսի բացառություն: Էներգետիկայի ոլորտում լիցենզիայի դադարեցման՝ Օրենքով նախատեսված կարգը համարելով միջամտություն էներգետիկայի բնագավառում գործող անձանց իրավունքին/ազատությանը՝ Պատասխանողը գնահատում է այն օրենքով նախատեսված, իրավաչափ նպատակներ հետապնդող, բավարար և անհրաժեշտ, իսկ Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը՝ Սահմանադրությանը համապատասխանող:

20. Ըստ Պատասխանողի՝ Օրենքի **27-րդ հոդվածի 2.1-ին մասով** սահմանված և Դիմողի կողմից վիճարկվող կարգավորումն առ այն, որ Կառավարությունն ունի գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունք, պայմանավորված է էներգետիկայի՝ պետության համար առանձնակի կարևորագույն ոլորտ լինելու հանգամանքից, բխում է հանրային անվտանգության, ազգային անվտանգության, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման

անվտանգության, սպառողների իրավունքների պաշտպանության, անձի կյանքի և անվտանգության ապահովման նպատակներից, որոնց իրականացման պարտավորությունը կրում է պետությունը: Հետևաբար՝ Պատասխանողը Կառավարության՝ գնելու նախապատվության իրավունքը՝ որպես պետության միջամտություն, գնահատում է որպես անհրաժեշտ ու բավարար միջոց վերոնշյալ հետապնդվող իրավաչափ նպատակներին հասնելու համար: Պատասխանողը եզրահանգում է, որ իրավաչափ նպատակի ապահովմանն ուղղված վիճարկվող դրույթներով սահմանված պետության միջամտությունը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ:

21. Պատասխանողը, անդրադառնալով **Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի** սահմանադրականության հարցին, վկայակոչելով Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդվածը, պնդում է, որ անհրաժեշտ է տարբերակել վատթարացնող նորմը և որոշակի դեպքի կապակցությամբ իրավակարգավորման գնահատողական պայմանները կամ չափորոշիչները: Պատասխանողի համոզմամբ՝ վիճարկվող դրույթով նախատեսված կանխարգելիչ միջոցների վերաբերյալ իրավակարգավորումները ոչ թե վատթարացնող, այլ ընդամենը որոշակի չափորոշիչներ նախատեսող բնույթ են կրում: Այս համատեքստում նշյալ իրավակարգավորումը չի հանդիսանում անձի վիճակը վատթարացնող: Նախկինում անձի կողմից կատարված խախտումներն արդեն իսկ ազդակ են տվյալ տնտեսվարող սուբյեկտի ոչ բարեխիղճ գործունեության վերաբերյալ, ուստի՝ անհրաժեշտ են օրենսդրական հակակշռող միջոցառումներ՝ ուղղված դրանք կանխելուն, խափանելուն և նվազեցնելուն: Այսինքն՝ նախկին արարքի համար չի նախատեսվում պատասխանատվություն (պատժելի չէ), այն զուտ հաշվի է առնվում որպես բնութագրող հատկանիշ կամ պայման՝ անձի կողմից նոր խախտման համար պատասխանատվություն սահմանելիս: Ուստի՝ ըստ Պատասխանողի՝ օրենսդրի կողմից՝ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար նոր իրավակարգավորումներով առաջադրված նոր պայմաններն ու պահանջներն առ այն, որ նախկինում անձի դրսևորած ոչ պատշաճ արարքը հաշվի է առնվելու, չի կարող դիտարկվել որպես վատթարացնող նորմ:

22. Վկայակոչելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Պատասխանողը գտնում է, որ նշյալ առաջին օրենքը սահմանում է ինչպես Հանձնաժողովի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի, այնպես էլ Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի դեպքերը, իսկ վարչական վարույթի իրականացումը վերապահված է Հանձնաժողովին, հետևաբար՝ համապատասխան որոշումները վարչական վարույթի վերջնարդյունքում ընդունվում են Հանձնաժողովի կողմից: Ուստի՝ Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցումը չի կարող մեկնաբանվել որպես Հանձնաժողովի գործունեության կոլեգիալ բնույթի խախտում:

23. Անդրադառնալով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված ձևակերպումներին՝ Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 79-րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) վերաբերելի իրավական դիրքորոշումները, հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ձևակերպումներում առկա «անորոշությունը» կոչված է ապահովելու դրույթների ճկունությունը՝ այդպիսով ապահովելով իրավակարգավորման համապատասխան մեկնաբանություն և կիրառում:

24. Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված Հանձնաժողովի նախագահի՝ կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը կիրառելու իրավասության վերաբերյալ Պատասխանողը փաստում է, որ նշված կանխարգելիչ միջոցառումները չունեն կանխակալ կամ կողմնակալ բնույթ, այլ վարույթի ընթացքում որոշակի հանգամանքները կանխարգելող գործողություններ են, որոնց կիրառման անհրաժեշտությունը որոշվում է՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի առանձնահատկությունները հաշվի առնելով: Ըստ Պատասխանողի՝ նման պայմաններում կանխարգելիչ միջոցառումները չեն կարող մեկնաբանվել որպես անձի պատասխանատվության իրավական գնահատականի վրա ազդեցություն ունեցող միջոցառումներ, քանի որ դրանք որոշակի արարքներ կատարելու հիմքով հարուցված վարույթի շրջանակներում

սպառողների շահերի պաշտպանության նպատակով կատարվող ընթացիկ գործողություններ են՝ տնտեսվարող սուբյեկտի և սպառողների շահերի միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու մտադրությամբ:

25. Պատասխանողի համոզմամբ՝ ««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերով հիմնավորվել է ակնկալվող փոփոխությունների անհրաժեշտությունը, որտեղ նշվել են նաև մինչ փոփոխությունը եղած կարգավիճակի և կարգավորման ենթակա խնդիրների մասին», իսկ համապատասխան օրենսդրական փոփոխության և նոր դրույթների նախատեսման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել էներգետիկայի բնագավառում գործունեության կարգավորման սահմանմամբ:

26. Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրական դատարանի՝ անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ դիրքորոշումները, անհրաժեշտ է համարել տարանջատել անձի սեփականության իրավունքը՝ գերակա հանրային շահով պայմանավորված դադարեցնելու, և որոշակի պայմանների և պահանջների պահպանման նախապայմանով տրված լիցենզիայի՝ որպես սեփականության իրավունքի՝ իբրև պատասխանատվության միջոց, դադարեցումը: Ըստ Պատասխանողի՝ նշված երկու իրավահարաբերությունների տարանջատման արդյունքում պարզ է դառնում, որ դրանց կարգավորումները չեն կարող նույնական լինել, կամ այդ հարաբերությունները չեն կարող նույնացվել: Պատասխանողը պնդում է, որ սեփականության իրավունքը սահմանափակվում է միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, և այն ունի կանխարգելիչ բնույթ՝ ապահովելով արդարացի հավասարակշռություն սահմանադրական իրավունքների միջև:

27. Պատասխանողի համոզմամբ՝ միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ պետության միջամտությունն օրինաչափ է հասարակության անվտանգության, ազգային անվտանգության, էներգիայի մատակարարման անխափան աշխատանքի ապահովման, էներգետիկ շուկայի անվտանգության, սպառողների իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանության համատեքստում:

28. Տնտեսական գործունեության առանձին տեսակների համար պետությունը, ըստ Պատասխանողի, ելնելով առավել վտանգի սպառնալիք պարունակող գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակից, սահմանել է տվյալ գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն: Այլ կերպ՝ պետության կողմից որոշակի տեսակի գործունեության լիցենզավորումն ինքնանպատակ չէ, այլ իրականացվում է ի պաշտպանություն հանրային շահերի, որոնք կարող են վտանգվել տնտեսվարողների գործունեության արդյունքում:

Պատասխանողը նշում է, որ քննարկվող դեպքում կարգավորումները սահմանված են օրենքով, վիճարկվող կարգավորումը բավարար չափով որոշակի է, և համապատասխան իրավահարաբերության սուբյեկտը լիարժեք կարող է կանխատեսել վիճարկվող կարգավորման պահանջները չկատարելու իրավական հետևանքները, ըմբռնել իրենից ակնկալվող վարքագծի բնույթը և, ըստ այդմ՝ իր վարքագիծը համապատասխանեցնել օրենսդրական գործող (նոր) պահանջներին: Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելիս լիցենզավորված անձինք պարտավոր են պահպանել տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պայմանները և պահանջները:

29. Պատասխանողը հարկ է համարում նշել, որ առավել կոշտ կարգավորումները բխում են էներգետիկայի՝ պետության համար առանձնակի կարևորագույն ոլորտ լինելու հանգամանքից, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովման, ազգային անվտանգության ապահովման, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման անվտանգության ապահովման, սպառողների իրավունքների պաշտպանության, սպառողների անվտանգության ապահովման, անձի կյանքի և անվտանգության երաշխիքներից:

30. Նշվածի տրամաբանությամբ անդրադառնալով լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման դեպքում Կառավարությանը նախապատվության իրավունք վերապահելու հարցին՝ Պատասխանողը գտնում է, որ դա բխում է այն իրավաչափ նպատակից, որի պաշտպանությունը գտնվում է պետության ներքո, և դրանով պայմա-

նավորված՝ պետության միջամտությունը՝ նախապատվության իրավունքի դրսևորմամբ, իրավաչափ է: Հետևաբար՝ «(...) իրավաչափ նպատակի ապահովման նպատակով քննարկվող նորմերով սահմանված պետության միջամտությունը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ»:

4. Սույն գործով պարզման ենթակա հանգամանքները

31. Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

1) արդյո՞ք Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետն այնքանով, որքանով Հանձնաժողովը, իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում լիցենզավորում իրականացնելով, կարող է դադարեցնել լիցենզիաների գործողությունը, ինչպես նաև Օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասն այնքանով, որքանով նախատեսում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունքը, համահունչ են Սահմանադրության 59 և 60-րդ հոդվածներով ամրագրված կարգավորումներին,

2) արդյո՞ք Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ և 2-րդ մասով սահմանված կանխարգելիչ միջոցառումների շրջանակը և դրանց կիրառման կարգի վերաբերյալ իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրության 59 և 60-րդ հոդվածներով ամրագրված, համապատասխանաբար՝ տնտեսական գործունեության ազատության և սեփականության իրավունքներին, ինչպես նաև մրցակցության սահմանափակման սահմանադրական չափանիշներին,

3) արդյո՞ք Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունն այնքանով, որքանով կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, համապատասխանում է Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ անձի իրավական վիճակը վարթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին:

4) արդյո՞ք Օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորման պայմաններում՝ կանխարգելիչ միջոցառման՝ լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարիչ նշանակելու պարագայում երաշխավորվում է շահագրգիռ անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը,

5) արդյո՞ք «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը, ինչպես նաև Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով նախատեսում են Հանձնաժողովի նախագահի իրավասությունը՝ միանձնյա հարուցելու վարչական վարույթ և կիրառելու կանխարգելիչ միջոցառումներ, համահունչ են Սահմանադրության 122-րդ հոդվածին:

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

5.1. Էներգետիկայի բնագավառի առանձնահատկությունների և իրավական հատուկ կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ

32. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ բացահայտել էներգետիկ համակարգի առանձնահատկությունները, որոնք նախորոշում ու պայմանավորում են էներգետիկայի ոլորտի իրավական կարգավորման յուրահատկությունները, համապատասխան իրավական ինստիտուտների առանձնահատուկ բովանդակությունը, որոնք ելակետային և որոշիչ նշանակություն ունեն սույն սահմանադրաիրավական վեճի լուծման համար:

33. Էներգետիկայի բնագավառը ժամանակակից պետության տնտեսական և հանրային կյանքի հիմքային ենթակառուցվածքային համակարգերից է, որի իրավական կարգավորումը պայմանավորված է ոչ միայն տնտեսական շրջանառության տրամաբանությամբ, այլև հանրային անվտանգության, սոցիալական արդարության, շրջակա միջավայրի պաշտպանության և պետական ինքնիշխանության ապահովման առաջնահերթություններով: Էներգետիկ հարաբերությունների բարդությունն ու բազմաշերտությունը, էներգետիկ համակարգի որոշ ենթակառուցվածքների **բնական մենաշնորհային բնութագրերը** պայմանավորում են դրանց նկատմամբ հատուկ իրավական ռեժիմի կիրառումը, ինչի հետևանքով այդ հարաբերությունների կարգավորումը տարբերվում է քաղաքացիաիրավական ընդհանուր կարգավորումից մի շարք

առումներով՝ սակագնային կարգավորմամբ, սպառողների պարտադիր սպասարկման պահանջներով, բնական մենաշնորհները կրող սուբյեկտների նկատմամբ հատուկ վերահսկողությամբ և այլն:

34. Էներգամատակարարումը դիտարկվում է որպես հանրային նշանակության ծառայություն (*public utility*): Այն անմիջականորեն առնչվում է կյանքի, առողջության, կրթության, արդյունաբերության և ազգային անվտանգության ապահովմանը, հետևաբար՝ էներգետիկ հասանելիությունն ունի սոցիալական իրավունքների իրականացման բաղադրիչ, ինչը ենթադրում է ծառայության անընդհատություն (*continuity principle*), համընդհանուր հասանելիություն (*universal service obligation*), սակագների ձևավորման տնտեսական և սոցիալական գործոնների հավասարակշռում:

35. Էներգետիկ օբյեկտներն ունեն բարձր տեխնիկական ռիսկայնություն: Վթարները կարող են առաջացնել ոչ միայն գույքային, այլև լայնածավալ բնապահպանական և հումանիտար հետևանքներ, ուստի՝ դրանց իրավական կարգավորումը պետք է ներառի լիցենզավորման խիստ ընթացակարգեր, տեխնիկական և անվտանգության հստակ ստանդարտներ, պետական վերահսկողության մշտական կառուցակարգեր, հատուկ պատասխանատվության ռեժիմ:

36. Էներգետիկ ոլորտը բնութագրվում է հանրային և մասնավոր շահերի ինտենսիվ հատմամբ: Մի կողմից՝ ներդրողները ձգտում են շահութաբերության և ներդրումների վերադարձելիության, մյուս կողմից՝ պետությունը պարտավոր է երաշխավորել հանրային շահի պաշտպանությունը: Այս հակասությունը հանգեցնում է կարգավորվող շուկայի մոդելի ձևավորմանը, որտեղ գործում են մասնավոր սուբյեկտներ, սակայն նրանց գործունեությունը ենթարկվում է պետական վերահսկողության, իսկ պայմանագրային ազատությունը սահմանափակվում է հանրային շահերի նկատառումներով:

37. Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն, որը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև տնտեսության համընթաց զարգացում, և այս համատեքստում էներգետիկան՝ որպես առանցքային ոլորտ, պետք է ապահովի պետության այնպիսի առաջընթաց, որը բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով նախադրյալներ կստեղծի ապագա սերունդների կայուն զարգացման համար:

38. Էներգետիկ համակարգն իր համակողմանի կարևորության և, դրանով պայմանավորված՝ գերակայության պատճառով ազգային ռազմավարության ու անվտանգության համակարգի հիմնարար բաղադրատարր է: Ազգային անվտանգությունը, իր հերթին, ամբողջությամբ և դրա առանձին տարրերը՝ տնտեսական, արտաքին տնտեսական, ֆինանսական, սոցիալական, էկոլոգիական, պաշտպանական և այլն, իրենց ապահովման մակարդակով էականորեն կախված են էներգետիկայի վիճակից, դրա ապահովման պահանջների իրացվածության աստիճանից և զարգացման ներուժից: Հայաստանի Հանրապետության պայմաններում էներգետիկ անվտանգությունը, հատկապես, կարևորություն է ձեռք բերում էներգետիկ ռեսուրսների ներմուծումից առավել կախվածության պատճառով, ինչն էներգամատակարարումը դարձնում է խոցելի՝ պայմանավորված արտաքին տնտեսական ու քաղաքական գործոններով:

39. Հանրային ծառայությունների ոլորտում էներգետիկան ունի առանձնահատուկ կարգավիճակ, քանի որ այն իր բնույթով ոչ միայն շուկայական արտադրանք է, այլև հանրային բարիք, որի անխափան մատակարարումը սահմանում է պետության սոցիալական պատասխանատվության իրականացման աստիճանը: Հանրային իշխանության մարմինները պարտավոր են մշակել և իրականացնել այնպիսի էներգետիկ քաղաքականություն, որը նվազեցնում է էներգետիկ ռեսուրսների գերակայող կախվածությունն արտաքին մատակարարներից՝ ապահովելով հասարակության համար էներգետիկ մատչելիություն, կանխատեսելիություն և հավասար հասանելիություն՝ որպես մարդկային արժանապատիվ կյանքի նվազագույն պայման:

40. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ էներգետիկ անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության բաղադրիչ, ենթադրում է, որ սույն ոլորտում հանրային իշխանության մարմինները կարող են սահմանել սեփականության ներհատուկ սահմանափակումներ, օտարերկրյա ներդրումների վերահսկողություն և ռազմավարական օբյեկտների պաշտպանության հատուկ ռեժիմ:

41. Էներգետիկայի բնագավառի հիշատակված գերակա նշանակությունից ելնելով՝ օրենսդիրը որդեգրել է այդ բնագավառի իրավական հատուկ կարգավորման տեսլական: Օրենքի՝ «**Հիմնական հասկացությունները**» վերտառությամբ 4-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ էներգետիկայի բնագավառի կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է (հոդված 8), որը ենթադրում է էլեկտրական էներգիայի

արտադրության, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման, արտահանման և տարանցման հնարավորությունների, ինչպես նաև կանխատեսվող սպառման ծավալների հայտարարագրման ու պլանավորման և իրական ժամանակում էլեկտրական էներգիայի ու բնական գազի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարելու նպատակով էներգետիկական համակարգի տեխնոլոգիական կառավարման համար անհրաժեշտ գործընթացի և գործողությունների համախումբ, որը կապահովի սահմանված որակի էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարումը՝ հուսալիության և անվտանգության ցուցանիշների պահպանմամբ:

42. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն էներգետիկայի բնագավառում պետությունն իրականացնում է հատուկ քաղաքականություն, որի սկզբունքների շրջանակի և դրանց բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ էներգետիկայի բնագավառում հատվում են տարբեր շահեր, մասնավորապես՝ ազգային անվտանգության, ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների, էներգիայի առանձին տեսակների սպառողների զանազան խմբերի, բնապահպանական և այլն: Օրենսդրական կարգավորման միջոցով՝ հանրային իշխանության միջամտության առարկան էներգետիկայի բնագավառում հատվող բոլոր տեսակի շահերի միջև հավասարակշռության ու ներդաշնակության հաստատումն է, ոլորտում տնտեսական գործունեություն իրականացնող անձանց, այդ թվում՝ սպառողների փոխհարաբերությունների կարգավորումը՝ նպատակ ունենալով ստեղծել էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների իրագործման կառուցակարգեր:

43. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ էներգետիկական գերակա նշանակություն ունեցող ոլորտ է, ուստի՝ էներգետիկայի բնագավառում հանրային իշխանությանը կարգավորող օրենքներով վերապահված են միջամտող լիազորություններ, որոնք միտված են բազմազան շահերի հավասարակշռմանը, էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության, կայունության, օգտագործման համընդհանուր հասանելիության, էներգիայի գների տնտեսական մատչելիության, էկոլոգիական անվտանգության, էներգետիկայի առաջանցիկ զարգացման ապահովմանը և այլն:

5.2. Էներգետիկայի բնագավառում հանրային իշխանության միջամտության սահմանադրաիրավական հիմքերի վերաբերյալ

44. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերհանել էներգետիկայի բնագավառում հանրային իշխանության միջամտության սահմանադրական հիմքերը, բնագավառում հատվող շահերի հավասարակշռումն ու պաշտպանությունն իրականացնող՝ Սահմանադրությամբ լիազորված հանրային սուբյեկտների շրջանակը, դրանց լիազորությունները:

45. Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հռչակվել է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: «Ինքնիշխան պետություն» սահմանադրական կարգի հիմունքից բխում է, որ հանրային իշխանության մարմինները կրում են սահմանադրական պարտականություն՝ երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը կառուցել պետության ինքնիշխանության երաշխավորման սահմանադրափոփոխ պահանջով, ձեռնարկել համակարգված, համալիր, անընդհատ միջոցառումներ պետության ինքնիշխանության ապահովման համար:

46. Պետության ինքնիշխանությունը պետականության գոյաբանական հիմքն է, պետական կամքի ինքնուրույնության կարողությունն ու աստիճանը, իսկ ինքնիշխանության ապահովման ուղղություններից է ազգային անվտանգության, ներառյալ՝ էներգետիկ անվտանգության ապահովումը: Առանց ազգային անվտանգության ապահովման՝ պետության ինքնիշխանությունը դառնում է խոցելի: Էներգետիկ համակարգի հուսալի գործունեությունն ու անվտանգությունը, դրա անկախությունն ու ինքնաբավությունը պետության ինքնիշխանության երաշխավորման նախապայմաններից են:

47. Էներգետիկան՝ որպես հանրային կենսագործունեության համակարգավորող և պետության ինստիտուցիոնալ կայունության չափորոշիչներից մեկը, հանդես է գալիս ոչ միայն որպես տնտեսական ենթակառուցվածք, այլև պետական ինքնիշխանության նյութակազմական հիմք և ազգային անվտանգության ռազմավարական հենասյուն, որը պայմանավորում է պետության ինքնիշխանության իրական աստիճանը, քաղաքական կայունությունը և ազգային անվտանգության մակարդակը: Այս առումով արդի ժամանակաշրջանում պետության անկախությունն ու ինքնիշխանությունը, ի շարս

այլնի, չափվում են նաև էներգետիկայի բնագավառում պետության պաշտպանվածության, ինքնաբավության և կայունության ցուցիչով:

48. Պետության էներգետիկ անվտանգության քաղաքականությունը մշակելիս և կենսագործելիս հանրային իշխանությունը, ի թիվս սույն որոշման նախորդ կետում նշված նպատակների, պետք է հաշվի առնի դրա քաղաքական, տնտեսական, իրավական և այլ առումները, գնահատի դրանց հետևանքային ազդեցությունը պետության և հասարակության վրա: Հետևաբար՝ օրենսդիրն էներգետիկ համակարգի ռազմավարական կառավարման և կարգավորման օրենսդրական հիմքերն ամրագրելիս ընդգծում է, որ հանրային իշխանությունը պարտավոր է ապահովել իրավական կառուցակարգեր, որոնք (1) սահմանում են էներգետիկ բնագավառի որոշակի ենթակառուցվածքների հատուկ պաշտպանության կարգավիճակ ունենալու հանգամանքը և անվտանգությունը, (2) ապահովում են դրանց նկատմամբ մշտական պետական վերահսկողության իրավական հնարավորությունները, (3) կանխում են ռազմավարական նշանակության այս ենթակառուցվածքների անվերահսկելի շուկայական շրջանառությունը, (4) ելնում են էներգետիկ անկախության աստիճանական ամրապնդման քաղաքականությունից:

49. Վերոգրյալը վկայում է էներգետիկայի հանդեպ հանրային իշխանության մարմինների մշտական անշեղ ուշադրության և պետական շարունակական վերահսկողության, իսկ հարկ եղած դեպքում՝ պետական միջամտության անհրաժեշտության մասին: **Հետևաբար՝ էներգետիկայի ոլորտում իրավակարգավորումները թե՛ օրենսդրական, թե՛ իրավակիրառ մակարդակում պետք է դիտվեն որպես պետական անվտանգային ռազմավարության հիմնարար բաղադրիչներ, ինչից բխում է, որ հանրային իշխանությունը կրում է այդ համատեքստում էներգետիկ անվտանգությունն ապահովելու պարտականություն, հետևաբար՝ այն սահմանադրի կողմից լիազորված է կանխելու և չեզոքացնելու համապատասխան սպառնալիքներն ու վտանգները՝ երաշխավորելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, ներառյալ էներգետիկ անկախությունը:**

50. Սահմանադրության՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է հանրային իշխանության պարտականությունը՝ պաշտպանելու մարդու

և քաղաքացու, այդ թվում՝ սպառողների հիմնական իրավունքները և ազատությունները, տվյալ դեպքում, համապատասխան շահերի հավասարակշռմանն ուղղված օրենքների շրջանակներում: Ձեռնարկատիրոջ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը պետք է երաշխավորված լինի էներգետիկայի բնագավառի բոլոր սպառողների, ինչպես նաև բնագավառում հատվող այլ շահերի սահմանադրական հավասարակշռության պայմաններում, հետևաբար՝ հարգելով և պաշտպանելով էներգետիկայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների շահերը՝ հանրային իշխանությունը չի կարող անտեսել ինչպես սպառողների, այնպես էլ հանրային շահերը, ուրեմն՝ պետք է տիրապետի համապատասխան գործիքակազմերի և պարտավոր է կիրառել դրանք՝ էներգետիկայի բնագավառում հատվող բոլոր շահերի հավասարակշռման համար:

51. էներգետիկայի բնագավառում սպառողների շահերի պաշտպանության հանրային իշխանության պարտականությունը բխում է ոչ միայն Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասից, այլև **«Պետության քաղաքականության հիմնական նպատակները»** վերտառությամբ 86-րդ հոդվածի 9-րդ կետից, համաձայն որի՝ տնտեսական ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է սպառողների շահերի պաշտպանությունը, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը: Սահմանադրական այդ պարտականության իրացման երաշխիք է Սահմանադրության՝ **«Պետության քաղաքականության հիմնական նպատակների իրագործումը»** վերտառությամբ 87-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավադրույթը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված նպատակները: Ընդ որում՝ Կառավարությունն Ազգային ժողով ներկայացրած իր տարեկան զեկույցի շրջանակներում (Սահմանադրության 156-րդ հոդված) տեղեկատվություն է ներկայացնում պետական քաղաքականության նպատակների, ներառյալ սպառողների շահերի պաշտպանության, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողության, իրագործման վերաբերյալ:

52. Էներգետիկայի բնագավառի կարևորությունից ելնելով՝ սպառողների շահերի պաշտպանության հիմնադրույթն Օրենքի հիմքում ընկած հայեցակարգային մոտեցումներից է, որն իր արտացոլումն է գտել նշված բնագավառի օրենսդրական կարգավորման առարկայի սահմանման մեջ (Օրենքի 1-ին հոդված), Էներգետիկայի բնագավառի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներում (Օրենքի 5-րդ հոդված, «դ» կետ), կարգավորիչ Հանձնաժողովի իրավասությունում (Օրենքի 17-րդ հոդված, բ, ե, է, ը և այլ կետեր), էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոնների իրավակարգավորումներում (Օրենքի 39.6-րդ հոդված), սպառողների էներգամատակարարման ապահովման տարաբնույթ երաշխիքներում (Օրենքի 9-րդ գլուխ, 45-56-րդ հոդվածներ): Այդ իրավակարգավորումներից բխում է, որ էլեկտրական էներգիայի բաշխման և երաշխավորված մատակարարման լիցենզիա ունեցող անձը կրում է սպառողների (բաժանորդների) հուսալի էլեկտրամատակարարումն ապահովելու, սահմանված ժամկետում սպառողների միացումը բաշխման ցանցին ապահովելու, առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտությունն ապահովելու և մի շարք այլ պարտականություններ:

53. Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ Էներգետիկայի բնագավառում հանրային իշխանության մարմինների միջամտությունն իր հիմքում ունի ոչ միայն ոլորտում տնտեսվարող անձանց իրավունքների ու շահերի հարգումն ու պաշտպանությունը, այլ նաև սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը, նշված երկու շահերի հավասարակշռության ու ներդաշնակության ապահովումը, ինչը բխում է Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասից, 86-րդ հոդվածի 9-րդ կետից, ինչպես նաև 87 և 156-րդ հոդվածներից:

54. Սահմանադրության՝ «Տնտեսական կարգը» վերտառությամբ 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը: Սահմանադրական կարգի նշյալ

հիմունքը Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմք է համարում սոցիալական շուկայական տնտեսությունը, որը, ինչպես և ազատ շուկայական տնտեսությունը, հիմնված է երեք հիմնադրույթների վրա՝ մասնավոր սեփականություն, տնտեսական գործունեության ազատություն, ազատ տնտեսական մրցակցություն: Նշյալ սկզբունքներով գործող շուկայական տնտեսությունը պետության կարգավորիչ քաղաքականության միջոցով պետք է ուղղված լինի ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով, մասնավորապես՝ 2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685 որոշմամբ, տնտեսվարողների իրավունքներին և ազատություններին միջամտության ուղենիշ են համարվել «(...) հնարավորինս կշռադատված, իրավական առումով՝ արդյունավետ» գործիքակազմերը, «ապահովվելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը»:

55. Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 11-րդ հոդվածից ևս բխում է, որ պետությանը վերապահված է «կշռադատված, իրավական առումով հիմնավորված, տնտեսական առումով արդյունավետ» կարգավորիչ միջամտության իրավասություն, որը նպատակամղված է ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության հաստատմանը:

56. Սահմանադրության՝ «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Այս իրավակարգավորումից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունը և ընդհանրապես, և՛ տնտեսական ոլորտում՝ մասնավորապես, Սահմանադրության ուժով որդեգրել է կայուն զարգացման քաղաքականություն, որը, ի թիվս այլնի, ենթադրում է երկրի և դրա տնտեսության և այս համատեքստում էներգետիկայի՝ որպես առանցքային ոլորտի համընթաց զարգացում, որը պետք է ապահովի երկրի

առաջընթացը բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով, որպեսզի նախադրյալներ ստեղծվեն ապագա սերունդների կայուն զարգացման համար:

57. Սահմանադրական այս դրույթից բխում է նաև, որ շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման համար Սահմանադրությամբ սահմանված պատասխանատու սուբյեկտը պետությունն է, որը պետք է ոչ միայն խթանի, այլև ապահովի բնապահպանական խնդիրների լուծումները:

58. Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ Սահմանադրության 12-րդ հոդվածի համատեքստում հանրային իշխանությունը էներգետիկայի բնագավառում ունի Սահմանադրությամբ սահմանված և կարգավորող օրենքներով մանրամասնեցված միջամտող լիազորություններ, որոնք բնապահպանական խնդիրների ներդաշնակեցման և հավասարակշռման միջոցով նպատակամղված են կայուն զարգացման համար նախադրյալների ստեղծմանը:

5.3. Էներգետիկայի բնագավառում հանրային իշխանության միջամտության սահմանադրաչափության գնահատումը տնտեսական գործունեության ազատության և սեփականության հիմնական իրավունքների համատեքստում

59. Սահմանադրության՝ «Տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցության երաշխավորումը» վերտառությամբ 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

60. Սահմանադրության նշյալ հոդվածի բովանդակությունից բխում է, որ տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցությունը դիտարկվում

են միասնության մեջ, այսինքն՝ հնարավորություն ընձեռելով իրականացնելու տնտեսական գործունեություն՝ պետությունը միևնույն ժամանակ պետք է երաշխավորի տնտեսական մրցակցությունը: Պետության տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի բոլոր տնտեսավարողների համար ոչ միայն անհրաժեշտ և հավասար պայմաններ ապահովելուն, որպեսզի յուրաքանչյուրն ազատորեն, առանց խոչընդոտների իրականացնի տնտեսական գործունեություն, այլև տնտեսական գործունեությանը բնորոշ առողջ մրցակցություն երաշխավորելուն՝ բացառելով շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնությունները:

61. Սահմանադրական դատարանի 1999 թվականի հունվարի 27-ի ՍԴՈ-152 որոշման համաձայն՝ «Ազատ տնտեսական մրցակցության սկզբունքն իր հերթին բխում է տնտեսական ազատության և հավասարության սկզբունքներից և նշանակում է շուկայական տնտեսության ներսում բոլոր տնտեսավարող սուբյեկտների հավասարություն, պետության կողմից նրանց համար հավասար պայմանների և հնարավորությունների ապահովում:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության դրույթների, սահմանադրականության միջազգային սկզբունքների վերլուծությունը վկայում է, որ ազատ տնտեսական մրցակցությունը չի բացառում պետության ու հասարակության անվտանգության և օրինական շահերի, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով պետության կողմից արգելված, պետական լիցենզավորման ենթակա, բնական կամ պետական մենաշնորհի հանդիսացող կամ բացառիկ իրավունքներով կարգավորվող գործունեության տեսակների առկայությունը:

Նման ոլորտների հստակեցումը, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության շրջանակների հնարավոր սահմանափակումները սակայն կանոնակարգվում են Սահմանադրությամբ և օրենքներով՝ ապահովելու համար նաև հակամենաշնորհային այնպիսի քաղաքականության իրականացում, որը երաշխավորում է բարեխիղճ մրցակցություն և տնտեսական ու սոցիալական առաջընթաց»:

62. Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատությունը և տնտեսական մրցակցությունը պետության տնտեսական զարգացման հիմնարար անկյունաքարերն են, որոնք հնարավորություն են ընձեռում յուրաքանչյուրին՝ ազատ, բարեխիղճ, հավասար և մրցակցային պայմաններում իրականացնելու տնտեսական գործունեություն:

63. Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում այն փաստի վրա, որ տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հիմնական իրավունքի բովանդակության սահմանորոշման համար Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը հղում է անում օրենքին՝ մասնավորապես սահմանելով, որ այդ հիմնական իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Սահմանադրական նման կարգավորման պայմաններում տվյալ հիմնական իրավունքի/ազատության օրենսդրական կարգավորման և այդ համատեքստում սահմանափակման չափանիշներ են հանդիսանում Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներով ամրագրված՝ համաչափության և իրավական որոշակիության սկզբունքների չափորոշիչները, ինչպես նաև 80-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքի էության անխախտելիության արգելքը:

64. Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասը պետք է մեկնաբանել՝ Սահմանադրության 11 և 60-րդ հոդվածների հետ համակարգային և գործառույթային սերտ կապերից ելնելով: Սահմանադրական դատարանը Սահմանադրության 11-րդ հոդվածի՝ վերը կատարված վերլուծությունների հիման վրա եզրահանգել է, որ պետությանը վերապահվում է **«կշռադատված, իրավական առումով հիմնավորված, տնտեսական առումով արդյունավետ» կարգավորիչ միջամտության իրավասություն, որը նպատակամղված է ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության հաստատմանը:**

65. Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման **իրավունքը սերտորեն փոխկապակցված է և առնչվում է սեփականության սահմանադրական իրավունքի հետ:** Սահմանադրական դատարանը, իր որոշումներում անդրադառնալով այդ խնդրին, արձանագրել է.

(1) «(...) *տնտեսական գործունեության ազատությունը խարսխվում է սեփականության հիմնական իրավունքի վրա՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրա երեք իրավազորություններով հանդերձ, որը Սահմանադրության ուժով ենթակա է սահմանափակումների: Տնտեսական գործունեության ազատությունը սեփականության իրավունքի իրավազորություններից առնվազն որևէ մեկի իրականացման եղանակ է, ուստի այդ ազատությունը և սեփականության իրավունքը բովանդակային առումով փոխկապակցված են: Հետևապես՝ սեփականության իրավունքի՝ օրենքով նախատեսվող սահմանափակումները ներգործում են տնտեսական գործունեության ազատության վրա՝ *mutatis mutandis* հնարավոր դարձնելով այդ ազատության սահմանափակումները նաև Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված հիմքերով (...)*»: (2020 թվականի մայիսի 12-ի ՍԴՈ-1530),

(2) «Տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման ու սեփականության իրավունքի փոխկապակցվածությունը դրսևորվում է նրանում, որ ազատ տնտեսական գործունեության և տնտեսական մրցակցության արդյունքում սեփականության ծավալն ավելացնելու նոր նախադրյալներ են ստեղծվում, ինչն, իր հերթին, իրական հնարավորություն է ընձեռում նաև ազատ տնտեսական գործունեության շրջանակն ընդլայնելու համար»: (2023 թվականի ապրիլի 25-ի ՍԴՈ-1685),

(3) «(...) *ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ազատությունն ուղղակիորեն փոխկապակցված է սեփականության իրավունքի հետ, ըստ այդմ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը ոչ միայն ուղղված է շահույթ (գույք) ստանալուն, այլ նաև իրականացվում է, ի թիվս այլնի, սեփականատիրոջ կողմից իր գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման եղանակով*»: (2025 թվականի մարտի 18-ի ՍԴՈ-1773):

66. Սահմանադրության՝ «**Սեփականության իրավունքը**» վերտառությամբ 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական

իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

67. Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքին, մասնավորապես՝ նշելով.

«(...) սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավազորությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով սեփականատիրոջ հայեցողությունը: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն:

(...)

(...) ՀՀ Սահմանադրությունը թույլատրում է բացառապես երկու դեպք, այն է՝ 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերը, երբ սեփականատիրոջ կամքն առաջնային չէ, և սեփականության իրավունքի իրացումը չի բխում սեփականատիրոջ հայեցողությունից: Հերևաբար, ցանկացած այլ դեպքում սեփականության իրավունքի իրացման գործընթացում միջամտությունը սեփականատիրոջ հայեցողությանը, սեփականատիրոջ գույքի տնօրինումն առանց այդ հայեցողության հստակ արտահայտման և դրսևորման չի կարող համարվել իրավաչափ և կհանդիսանա սեփականության իրավունքի խախտում»: (2012 թվականի փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշում):

Ելնելով սեփականության իրավունքի պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի բաղադրիչ լինելու հիմնարար սահմանադրական արժեքից՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսվել են սեփականության իրավունքին միջամտությունների՝

(1) սեփականության իրավունքի ընդհանուր սահմանափակումների,

(2) սեփականությունից զրկման և

(3) հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականության օտարման նպատակները, իրավական հիմքը և պայմանները:

Մասնավորապես, 2023 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1699 որոշմամբ արձանագրված է. «Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նորմը գործում է որպես սեփականության իրավունքին հանրային իշխանության կողմից միջամտության ընդհանուր կանոն (*lex generalis*):

Միաժամանակ, սեփականության իրավունքի առավել խիստ միջամտության երկու հատուկ ձևերի՝ սեփականությունից զրկելու և հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հասարակության և պետության կարիքների համար) սեփականությունը օտարելու իրավահարաբերությունների կարգավորման նպատակով Սահմանադրության, համապատասխանաբար, 60-րդ հոդվածի 4-րդ մասով և 60-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել են հատուկ նորմեր, որոնք Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի նկատմամբ հանդես են գալիս որպես հատուկ նորմեր (*lex specialis*), որոնք, դրանցով նախատեսված միջամտության խստության աստիճանով և իրավահարաբերությունների բնույթով պայմանավորված, նախատեսել են սեփականության իրավունքին միջամտության սահմանադրաչափության հատուկ և պարտադիր այլ պայմաններ: Մասնավորապես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ընդհանուր պայմանների հետ մեկտեղ սեփականությունից զրկվելու ձևով միջամտության սահմանադրաչափության անհրաժեշտ պայման է նաև Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված «դատական կարգի» ապահովումը, ինչպես նաև սեփականությունից զրկվելու դեպքի «օրենքով սահմանված» լինելը»:

68. Սահմանադրական դատարանը բացահայտել է նաև «սեփականությունից զրկելու» ինստիտուտի իրավական բովանդակությունը: Այսպես՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2013 թվականի հունվարի 30-ի ՍԴՈ-1073 որոշմամբ նշել է. «(...) անձի բացառիկ իրավունքն է իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը՝ պայմանով, որ այդ իրավունքի իրացումը չխախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը, վնաս չպատճառի շրջակա միջավայրին: Իսկ որպես սեփականության անձեռնմխելիության ապահովման երաշխիք՝ սկզբունքային նշանակություն ունի նաև Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ մասում հաստատված սեփականագրկման՝ բացառությամբ դատական կարգով և օրենքով նախատեսված դեպքերում իրականացման սկզբունքը, որը, ի տարբերություն օտարման ընթացակարգի (<< Սահմ. 31-րդ հոդվածի 3-րդ մաս), ենթադրում է օրենքով սահմանված իրավական պատասխանատվության համապատասխան միջոցի կիրառում»:

69. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

70. ՄԻԵԴ պրակտիկայի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տե՛ս Trgo v. Croatia, Application no. 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, §44):

71. Ըստ ՄԻԵԴ-ի՝ «գույքը» կարող է լինել «գոյություն ունեցող սեփականությունը» կամ «ակտիվները», ներառյալ՝ պահանջները, որոնց առնչությամբ դիմումատուն կարող է վիճարկել, որ առնվազն ունի սեփականության իրավունքից անարգել օգտվելու «իրավաչափ ակնկալիք» (տե՛ս J. A. Pye (Oxford) Ltd and J. A. Pye (Oxford) Land Ltd v. United Kingdom, Application no. 44302/02, 30.08.2007, §61):

Իր հերթին՝ «ակնկալիքը» համարվում է իրավաչափ, եթե այն հիմնված է օրենսդրական դրույթի կամ քննարկվող գույքի վերաբերյալ իրավական ակտի վրա (տե՛ս *Saghinadze and others v. Georgia*, Application no. 18768/05, 27.05.2010, Final 27.08.2010, §103): Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն իր՝ 2024 թվականի հոկտեմբերի 15-ի ՍԴՈ-1757 որոշմամբ արձանագրել է. «(...) *ինքնին գույքային շահը կամ հավակնությունը, որը զուրկ է իրավական հիմքից, չի կարող հանդես գալ որպես Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի պաշտպանության երաշխիքների ներքո «օրինական ակնկալիք»*»:

72. Հատկանշական է, որ ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի շրջանակներում Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ որպես «գույք» է դիտարկվում նաև լիցենզիան. գործարարական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ լիցենզիան թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով գույք է. այն ուժը կորցրած ճանաչելը ենթադրում է նշված հոդվածով երաշխավորված իրավունքին միջամտություն (տե՛ս *Bimer S. A. v. Moldova*, Application no. 15084/03, 10.07.2007, Final 10.10.2007, §49): Այսպես՝ ՄԻԵԴ-ը նաև նշում է, որ «(...) Եվրոպական դատարանի համար դժվար թե հնարավոր լինի չդիտարկել լիցենզիան, որը ժամանակին երաշխավորում էր դիմումատուի շրջանառության զգալի մասը (...), որպես «սեփականություն» թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի նպատակների համար (...): Դատարանը հետագայում հիշեցնում է, որ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու լիցենզիան հետ վերցնելը հավասարազոր է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված գույքի խաղաղ օգտագործման իրավունքին միջամտելուն (...): Եվրոպական դատարանը գտնում է, որ հայտատուի ծխախոտային արտադրատեսակների արտադրության լիցենզիայի չեղյալ հայտարարելը և չվերականգնելը հանդիսանում են Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ կետի գործողության ներքո գտնվող գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության միջոց» (տե՛ս *Vékony v. Hungary*, Application no. 65681/13, 13.01.2015, FINAL 01.06.2015, §29):

73. Այսպիսով, ՄԻԵԴ-ի կողմից «գույք» հասկացության ընդլայնումը և լիցենզիաների ներառումն այդ շրջանակում ունեն հիմնարար նշանակություն, քանի որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ կարևորվում է ոչ միայն

սեփականության ֆորմալ ճանաչումը, այլև դրա իրական՝ գործառնական (ֆունկցիոնալ) նշանակությունը՝ որպես անձի տնտեսական գործունեությունն ու եկամուտ (շահույթ) ստանալու հնարավորություններն ապահովող միջոց:

74. Միաժամանակ, սեփականության իրավունքը ենթակա է սահմանափակման, և այդ առնչությամբ նախանշված են այն իրավաչափ նպատակները, որոնց առկայության պարագայում նշված իրավունքին միջամտությունը կարող է լինել սահմանադրաչափ: Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ **հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով**, իսկ 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ **հանրային շահերի պաշտպանության նպատակով**:

5.4. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ստացած անձանց լիցենզիայի դադարեցմամբ համապատասխան գործունեության իրականացմանը միջամտության վերաբերյալ

75. Օրենքի՝ «Հանձնաժողովի իրավասությունները» վերտառությամբ 17-րդ հոդվածի «գ» կետն ամրագրված է «Կարգավորումները էներգետիկայի բնագավառում» վերտառությամբ 3-րդ գլխի ներքո: Օրենքի իմաստով՝ «կարգավորում» հիմնական հասկացությունը նշանակում է. «Էլեկտրական էներգիայի արտադրության, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման, արտահանման և տարանցման հնարավորությունների, ինչպես նաև կանխատեսվող սպառման ծավալների հայտարարագրման ու պլանավորման և իրական ժամանակում էլեկտրական էներգիայի ու բնական գազի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարելու նպատակով էներգետիկական համակարգի տեխնոլոգիական կառավարման համար անհրաժեշտ գործընթացի և գործողությունների համախումբ, որը կապահովի սահմանված որակի էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարումը՝ հուսալիության և անվտանգության ցուցանիշների պահպանմամբ» (Օրենքի 4-րդ հոդվածի 17-րդ կետ):

76. Օրենքի՝ «**Էներգետիկայի բնագավառի կարգավորումը**» վերտառությամբ 8-րդ հոդվածի համաձայն՝ էներգետիկայի բնագավառի կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և լիցենզիա ունեցող անձանց շահերը, լիցենզիա ունեցող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ և նպաստել մրցակցային շուկայի ձևավորմանն ու զարգացմանը՝ երաշխավորելով սպառողների իրավունքները:

77. Օրենքի նշյալ և այլ վերաբերելի իրավադրույթների համալիր վերլուծությունից բխում է, որ էներգետիկայի բնագավառի կարգավորման նպատակների շրջանակը, բացի սպառողների շահերի, իրավունքների երաշխավորման ապահովումից, ներառում է նաև ազգային անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության և մի շարք այլ շահերի ապահովումը և/կամ երաշխավորումը: Այս նպատակներին համապատասխան՝ Օրենքի՝ «**Կարգավորումը էներգետիկայի բնագավառում**» վերտառությամբ 3-րդ գլուխը սահմանում է էներգետիկայի բնագավառի կարգավորման հիմնական միջոցները, Հանձնաժողովի իրավասությունները, էներգետիկայի բնագավառում կնքվող որոշ տեսակի պայմանագրերի հաշվառման կամ գրանցման պահանջը:

78. Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետով Հանձնաժողովին վերապահվում է իրավասություն՝ իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում, տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը և կիրառելու Օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները:

79. «Լիցենզավորման մասին» օրենքի՝ «**Լիցենզավորող մարմինները**» վերտառությամբ 8-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ էներգետիկայի, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառներում և ջրային ոլորտում լիցենզավորման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխանաբար՝ «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքներով, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով և դրանց համաձայն ընդունված լիցենզավորման կարգերով:

«Լիցենզավորման մասին» օրենքի՝ **«Լիցենզավորման կարգերը»** վերտառությամբ 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրվող լիցենզիաների լիցենզավորման կարգերը հաստատում է տվյալ Հանձնաժողովը:

Նույն օրենքի՝ **«Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը»** վերտառությամբ 43-րդ հոդվածին համապատասխան՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է, ի թիվս այլնի, էներգետիկայի բնագավառում բնական գազի փոխադրումը, բաշխումը, ներկրումը, արտահանումը, էլեկտրական էներգիայի արտադրությունը (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրությունը), հաղորդումը, բաշխումը, էլեկտրական էներգիայի մատակարարումը (ներառյալ՝ երաշխավորված), մեծածախ առևտուրը, ջերմային էներգիայի արտադրությունը, փոխադրումը, բաշխումը, էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորի ծառայությունները, էներգետիկական շուկայի օպերատորի ծառայությունները:

80. Տնտեսական գործունեության առանձին տեսակների համար պետությունը, ելնելով անձանց կյանքին, առողջությանը, գույքին, հանրային շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիք պարունակող գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակից, սահմանել է տվյալ գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ուստի՝ պետության կողմից որոշակի տեսակի գործունեության լիցենզավորումն ինքնանպատակ չէ, այլ իրականացվում է նաև՝ ի պաշտպանություն տարատեսակ շահերի, որոնք կարող են վտանգվել տնտեսվարողների գործունեության արդյունքում:

81. Սահմանադրական դատարանը փաստում է, որ էներգետիկայի բնագավառում պետության կողմից վերահսկողության իրականացման իրավական եղանակներից է նաև համապատասխան ինքնավար մարմնի՝ Հանձնաժողովի կողմից լիցենզավորումը, ներառյալ՝ լիցենզիայի գործողությունը դադարեցնելը, որը, որպես միջամտություն, ունի հստակ սահմանված սահմանադրական իրավական հիմքեր, կոչված է ապահովելու ոլորտում հատվող բոլոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը:

82. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետի իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանության հարցը պետք է դիտարկել լիցենզիայի դադարեցման հիմքերի, այսինքն՝ համապատասխան սահմանափակումների հիմքերի որոշակիության համատեքստում: Օրենքի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրորեն հստակ ամրագրված են լիցենզավորված անձի լիցենզիայի գործողության դադարեցման հիմքերը, մասնավորապես՝ Օրենքի՝ **«Գործունեության լիցենզիայի կասեցումը և դադարեցումը»** վերտառությամբ 30.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել «Լիցենզավորման մասին» օրենքով, սույն օրենքով կամ այլ օրենքներով, ինչպես նաև հետևյալ դեպքերում.

ա) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար, կամ Հանձնաժողովը մերժել է փոփոխություններ կատարելու դիմումը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

բ) արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, կամ Հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

գ) արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում Հանձնաժողովը կասեցրել է արտադրության լիցենզիան, և մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը լիցենզիայի կասեցումը չի վերացվել.

դ) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած

ճանաչվելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա.

ե) արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում)՝ պետական իրավասու մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի կամ համապատասխան պայմանագրի գործողության դադարեցման հիմքով»:

83. Նշյալ հոդվածում գործածված **«սույն օրենքով»** ձևակերպման իմաստով՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիայի դադարեցման հիմքերն Օրենքի՝ **«Հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվությունը»** վերտառությամբ 42-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումներն են, մասնավորապես՝

(1) «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ քսան միլիոն դրամից քառասուն միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մաս):

(2) «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն

հողվածի 4-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ միլիոն դրամից տասը միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մաս):

(3) «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանն առաջացնում է տուգանք՝ տասը միլիոն դրամից քսան միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մաս):

(4) «Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամից երկու միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 8-րդ մաս):

(5) «Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամից մեկ միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 10-րդ մաս):

(6) «Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձի կողմից սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը, առաջացնում է տուգանք՝ մեկ միլիոն դրամից մեկուկես միլիոն դրամի չափով, կամ լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում» (Օրենքի 42-րդ հոդվածի 11-րդ մաս):

84. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող կարգավորումը բավարար չափով որոշակի է, իսկ համապատասխան իրավահարաբերության սուբյեկտը լիարժեք կարող է կանխատեսել Օրենքի պահանջները չկատարելու պարագայում՝ վիճարկվող կարգավորման ուժով Հանձնաժողովի կողմից կիրարկվող միջոցն ու դրա արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները, ըմբռնել իրենից ակնկալվող վարքագծի բնույթը և, ըստ այդմ՝ իր վարքագիծը համապատասխանեցնել օրենսդրական գործող պահանջներին:

85. Սահմանադրական դատարանը փաստում է նաև, որ Օրենքը լիցենզիայի գործողության դադարեցմամբ լիցենզիայից զրկված անձի համար սահմանում է որոշակի նյութական ու ընթացակարգային իրավական երաշխիքներ: Մասնավորապես՝ Օրենքի՝ «**Սպառողների շահերի պաշտպանության երաշխիքները**» վերտառությամբ 52-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե անձի լիցենզիայի գործողությունը

դադարեցվել է, ապա Կառավարությունն այդ անձի բաժնետերերին (մասնակիցներին) առաջարկում է իր հետ համաձայնեցված կարգով օտարել այդ ընկերության բաժնետոմսերը (բաժնեմասերը), գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող՝ իր սեփականությունը հանդիսացող գույքային համալիրը: Այդ օտարումը եռամսյա ժամկետում չիրականացվելու դեպքում, որպես բացառիկ միջոց, բաժնետոմսերը (բաժնեմասերը), գույքը կամ լիցենզավորված գործունեությունն ապահովող գույքային համալիրը կարող են օտարվել Սահմանադրության 60-րդ հոդվածին համապատասխան:

86. Բացի դրանից, թեև լիցենզիայի գործողության դադարեցումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ վարչական կարգով, օրենսդիրը՝ ի ապահովումն Սահմանադրության 61-րդ հոդվածի պահանջների, լիցենզավորված անձին իրավունք է վերապահում դատական կարգով բողոքարկելու լիցենզիայի գործողության դադարեցման վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը, իսկ Սահմանադրության՝ «Վնասի հատուցման իրավունքը» վերտառությամբ 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք, որի պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

87. Սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով վերը կատարված իրավական վերլուծությունները, ինչպես նաև Հանձնաժողովի լիցենզիայի գործողության դադարեցման օրենքով սահմանված իրավասությունը դիտարկելով համաչափության սահմանադրական սկզբունքի պահանջների լույսի ներքո, գտնում է, որ Հանձնաժողովի՝ որպես ինքնավար մարմնի կողմից լիցենզավորում իրականացնելը, այդ թվում նաև՝ լիցենզիայի գործողությունը դադարեցնելը, էներգետիկայի բնագավառում պետության կողմից վերահսկողության իրականացման իրավական եղանակներից է, որը որպես միջամտություն ունի սահմանադրական իրավական հիմքեր՝ հանդիսանալով տնտեսական գործունեության ազատությանը և սեփականության իրավունքին միջամտություն, հետապնդում է ինչպես ընդհանուր սահմանադրաչափ, այնպես էլ կոնկրետ իրավաչափ նպատակներ:

88. Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիայի դադարեցումը, նախ՝ իրավախախտման հետևանքով վրա հասնող պատասխանատվության միջոց է, հետևաբար՝ այն «Լիցենզավորման մասին» օրենքով, Օրենքի 30.1-ին հոդվածի 2-րդ մասով և 42-րդ հոդվածով և այլ օրենքներով սահմանված հիմքերի առկայության պայմաններում **պիտանի միջոց է**, քանի որ պետությանը հնարավորություն է ընձեռում ունենալու իրավական գործիքակազմ՝ իր համար առանձնահատուկ և հստակ ուրվագծված հանրային շահերից ելնելով վերահսկողություն իրականացնելով՝ հնարավոր դարձնել Սահմանադրությամբ նախանշված իրավաչափ նպատակների կենսագործմանը հասնելը: Ավելին, սույն միջոցը պիտանի է, քանի որ այն նպատակադրված է, ի թիվս այլնի, նաև բացառիկ նշանակության այս ենթակառուցվածքի շարունակական անխափան աշխատանքի երաշխավորմանը՝ ապահովելով նաև հանրային շահի երաշխավորումը:

Պետության կողմից էներգետիկայի բնագավառում վերահսկողական գործառույթները վերապահված են նաև Հանձնաժողովին, որը, ի թիվս այլ լիազորությունների, կարող է օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, որպես իրավախախտման հետևանք՝ դադարեցնել լիցենզավորված անձի համապատասխան գործունեության լիցենզիան՝ վարչական կարգով՝ չզրկելով անձին դատական պաշտպանության հիմնական իրավունքից:

89. Համաչափության սկզբունքի մյուս տարրի՝ սահմանադրորեն առկա **իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրված միջոցի անհրաժեշտության** հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով հանրային ծառայությունների ոլորտում, այդ թվում՝ էներգետիկայի բնագավառում, կարգավորում իրականացնող ինքնավար մարմինը՝ Հանձնաժողովը, իրականացնում է հանրային ծառայությունների ոլորտի կարգավորումը՝ նպատակ ունենալով օրենքով սահմանված իր իրավասությունների իրականացմամբ, ոլորտային ռազմավարական քաղաքականությանը համահունչ հավասարակշռել ոլորտում առկա տարատեսակ շահերը, սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, վերջիններիս համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային

շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

90. Վերոնշյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ օրենսդրի կողմից ընտրված միջոցը **հետապնդվող նպատակին հասնելու համար անհրաժեշտ է**, քանի որ իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում լիցենզավորում իրականացնելը՝ լիցենզիաներ տրամադրելը, դրանց գործողության ժամկետները երկարաձգելը, վերաձևակերպելը, դրանց գործողությունը կասեցնելը և դադարեցնելը, ինչպես նաև լիցենզիաների պայմանները սահմանելը, դրանց կատարումը վերահսկելը և օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները կիրառելը Հանձնաժողովի՝ որպես ինքնավար մարմնի բացառիկ լիազորությունն է, ուստի՝ միայն Հանձնաժողովը կարող է էներգետիկայի բնագավառում լիցենզավորում իրականացնել՝ ընդունելով համապատասխան որոշումներ:

91. Համաչափության սկզբունքի **համարժեքության** տարրի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ լիցենզիա ստացած անձանց տնտեսական գործունեության ազատությունը և սեփականության իրավունքը սահմանափակելն առավել նվազ նշանակություն և հետևանքային ազդեցություն ունի, քան Սահմանադրությամբ ամրագրված այն հիմնարար արժեքները, որոնց պաշտպանության նպատակով սահմանվել են նշված սահմանափակումները:

5.5. Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքները Կառավարության՝ գնելու նախապատվության իրավունքով սահմանափակելու վերաբերյալ

92. Օրենքի՝ «Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքների սահմանափակումը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 2.1-ին մասում սահմանված գնելու նախապատվության իրավունքն իր առաջացման հիմքով՝ օրենքով սահմանված (ex lege), իսկ ըստ շահերի բավարարման՝ հանրային իրավունք է, որի հիմքով առաջացող իրավահարաբերության մասնակիցներ են լիցենզիա ունեցող անձը՝ որպես սեփականատեր, հնարավոր գնորդը՝ որպես գնման կամ այլ կերպ օտարման հավակնորդ, և Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Կառավարության:

93. Կառավարությանը գործարքի առարկա գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի ձեռքբերման նախապատվության իրավունքի վերապահումը հետապնդում

է ողջամիտ և իրավաչափ նպատակ, որպեսզի կենսական ու անվտանգային նշանակություն ունեցող գույքը երրորդ անձին օտարելը պայմանավորված չլինի միայն և բացառապես տնտեսական շահերով կամ առավել ևս լինի ինքնաբուխ, այլ կառավարելի և կանխատեսելի դարձվի երրորդ անձի (գնորդի) ընտրության գործընթացը, և դրանով իսկ ապահովվի ազգային անվտանգության և ներքին շուկայի սպառողների շահերը, էներգետիկ համակարգի հուսալիությունն ու կայունությունը և այլ որակները:

94. Ի տարբերություն գնելու նախապատվության մասնավոր իրավահարաբերության սուբյեկտի, որը հետապնդում է մասնակիցների կազմի անփոփոխելիության ապահովման նպատակը՝ ելնելով իր մասնավոր շահերից, Կառավարությունը՝ որպես գնելու նախապատվության իրավունքի կրող, գործում է ընդհանուր հասարակական/հանրային շահերով դրդված, որովհետև Սահմանադրության ուժով՝ այդ շահերի ապահովման հավաքական պատասխանատու սուբյեկտն է:

Եթե գնելու նախապատվության ինստիտուտի մասնավոր տեսակում արտոնությունը հավասարակշռում է համատեղ իրավունքը կրողների (համասեփականատերերի, մասնակիցների) մասնավոր շահերը, ապա վիճարկվող իրավակարգավորման մեջ Կառավարությունը՝ որպես գնելու նախապատվության իրավունքը կրող սուբյեկտ, կոչված է գնելու նախապատվության իրավունքի իրականացմամբ ապահովելու հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը: Էներգետիկայի բնագավառում այդ **հավասարակշռության ապահովումը խիստ անհրաժեշտություն է**, իսկ դրա ապահովման **պիտանի միջոցը** նախապատվության իրավունքի կենսագործման միջոցով լայն իմաստով պետության անվտանգային համակարգ երրորդ անձանց անվերահսկելի մուտքը կանխելու լեգիտիմ հնարավորությունն է:

95. Մինչույն ժամանակ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Կառավարության կողմից իր նախապատվության իրավունքի իրացումից հրաժարումը չի ենթադրում օտարվող գույքի նկատմամբ քաղաքացիական շրջանառության այլ սուբյեկտների գնման իրավունքի իրացման անհնարինություն: Այլ կերպ՝ քաղաքացիական շրջանառության համապատասխան սուբյեկտները կարող են հավակնել օտարվող գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուն՝ ընդունելով էներգետիկայի բնագավառում հիշատակված պատճառաբանությամբ պետության բացառիկ վերահսկողությունը:

96. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ ձեռնարկատիրական գործունեության ազատության և օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տնօրինելու իրավունքների համատեքստում Օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասում նախատեսված՝ Կառավարության՝ գնելու նախապատվության իրավունքը՝ որպես այդ իրավունքների ազատ իրականացման սահմանափակում, **(1)** լինելով անհրաժեշտ և պիտանի սահմանափակման միջոց, համարժեք է այն հանրային շահերին, որոնք բավարարվում են հիմնական իրավունքը/ազատությունը սահմանափակող միջոցի օգնությամբ, **(2)** պիտանի միջոց է ոչ միայն հանրային, այլև տնտեսավարող այլ սուբյեկտների շահերի ապահովման համար՝ **(3)** սահմանափակելով վաճառողի՝ գնորդին ազատորեն ընտրելու առավել ինքնավարության հնարավորությունը, չի խախտում նրա հիմնական իրավունքի էությունը, **(4)** հետևաբար՝ սահմանադրաչափ է և կոչված է օրենքով սահմանված ընթացակարգով ապահովելու այդ իրավունքի հիմքով առաջացած իրավահարաբերության բոլոր մասնակիցների շահերի հավասարակշռումը:

5.6. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված կանխարգելիչ միջոցառումների և դրանց կիրառման կարգի վերաբերյալ

97. Օրենքի՝ 52.1-ին հոդվածը («Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառումը») լրացվել է «**Սպառողների էներգամատակարարման ապահովման երաշխիքները**» վերտառությամբ 9-րդ գլխում, որի 47-56-րդ հոդվածները կարգավորում են սպառողների էներգամատակարարման, արտադրված էլեկտրաէներգիայի փոխանցման, էներգամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակների, արտակարգ իրավիճակների, սպառողների շահերի պաշտպանության հետ կապված մի շարք այլ հարաբերություններ:

Օրենքի 52.1-ին հոդվածը սահմանում է, որ Հանձնաժողովի նախագահը՝ Օրենքով սահմանված հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ, որոնք սահմանված են Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերում, ընդ որում՝ Հանձնաժողովի նախագահն իրավունք ունի կիրառել «կանխարգելիչ միջոցառումներից մեկը կամ մի քանիսը»:

98. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված «**Պատասխանատվության միջոցներ**» գլխի իրավակարգավորումների համեմատական վերլուծությունից երևում են 52.1-ին հոդվածի իրավակարգավորումների էությունը և նպատակային նշանակությունը, ինչպես նաև դրանով սահմանված կանխարգելիչ միջոցառումների կիրառման հիմքերը, մասնավորապես՝ **(1)** Օրենքի 52.1-ին հոդվածում ամրագրված կանխարգելիչ միջոցառումներից յուրաքանչյուրի կիրառումը լիցենզավորված անձի համար հանգեցնում է որոշակի իրավական հետևանքների, որոնք, համապատասխանաբար, կարող են հանգեցնել լիցենզավորված անձի իրավական կարգավիճակի փոփոխության, սակայն, այդուհանդերձ, դրանք իրենց նշանակությամբ իրավական պատասխանատվության միջոցներ չեն: Կանխարգելիչ միջոցառումներն ուղղված են հարուցվող վարչական վարույթի անխոչընդոտ ընթացքի ապահովմանը, ռազմավարական նշանակության օբյեկտ հանդիսացող կառույցի անխափան ու բնականոն աշխատանքի երաշխավորմանը, սպառողների շահերի պաշտպանությանը, էներգետիկայի բնագավառում ռիսկերի նվազեցմանը, դրա կայուն ու շարունակական զարգացման ապահովմանը, **(2)** կանխարգելիչ միջոցառումները կարող են Հանձնաժողովի նախագահի կողմից կիրառվել Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ կամ 6-րդ մասերով սահմանված արարքներ կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ:

99. Այսպիսով, օրենսդիրը սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառման իմպերատիվ պայման է սահմանել վերոնշյալ դրույթներով սահմանված արարքներից որևիցե մեկը կատարելու հիմքով վարչական վարույթի հարուցումը: Ընդ որում՝ Օրենքի 42-րդ հոդվածի համալիր ուսումնասիրությունը հիմք է տալիս փաստելու, որ օրենսդիրը սահմանել է, որ սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումները կարող են կիրառվել նշյալ հոդվածով ամրագրված ոչ թե բոլոր իրավախախտումների համար, այլ բացառապես **(1)** կրկին կատարված արարքների կամ **(2)** այն արարքների, որոնց հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման կամ էներգետիկայի բնագավառում այլ լիցենզավորված անձի

օրինական շահերի խախտման կամ լիցենզավորված գործունեության խոչընդոտմանը կամ լիցենզիայի պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը կամ խոչընդոտել է կարգավորող մարմնի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը:

100. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանված կանխարգելիչ միջոցառումներն իրենց իրավական բնույթով պատասխանատվության միջոցներ չեն, այլ միջոցառումներ են, որոնցից յուրաքանչյուրի ինչպես առանձին, այնպես էլ համակցված կիրառումը, մի կողմից՝ հետապնդում է էներգետիկայի բնագավառում հանրային շահերի առավել համապարփակ պաշտպանությունը՝ հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի կարևորությունն ու այդ բնագավառի նկատմամբ պետության՝ ի դեմս Հանձնաժողովի, միջամտության անհրաժեշտությունն ու չափավորությունը (համաչափությունը), մյուս կողմից՝ կոչված է նպաստելու կամ պայմաններ ստեղծելու հարուցված վարույթի պատշաճ իրականացման, վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած իրավախախտումների քննության և հանգամանքների բացահայտման համար:

101. Միաժամանակ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են բողոքարկվել դատական կարգով, ինչից բխում է, որ բողոքարկելի են նաև կանխարգելիչ միջոցառումների կիրառմանը վերաբերող ակտերը:

102. Ամփոփելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանված կանխարգելիչ միջոցառումները **(1)** նպատակ են հետապնդում, մասնավորապես, կանխել գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը, ապահովել հարուցված վարչական վարույթի անխոչընդոտ ու բնականոն ընթացքը, ինչպես նաև էներգետիկ համակարգի կայունության ու գործառույթային ամբողջականությունը, էլեկտրաէներգետիկական համակարգի բնականոն և անխափան գործունեության շարունակականությունը, **(2)** կանխարգելիչ միջոցառումների կիրառումը ոչ թե պարտադիր պահանջ է, այլ հարուցվող վարույթի հիմք հանդիսացող իրավախախտումների բնույթով և գործի կոնկրետ հանգամանքներով պայմանավորված նպատակահարմար-

րություն, ինչով և պայմանավորված է կանխարգելիչ միջոցառումների ողջ համակցությունից մեկի կամ մի քանիսի կիրառման իրավական հնարավորություն նախատեսելը, **(3)** կարող են կիրառվել վարչական վարույթի հարուցման պահին կամ դրա իրականացման հետագա ընթացքում, մինչև դրա ավարտը, և դրանց կիրառումը կապ չունի իրավախախտի մեղքի հաստատման հետ, **(4)** ի վերջո, կանխարգելիչ միջոցառումների կիրառումը վարչական վարույթի շրջանակներում համապատասխան անձի սեփականության իրավունքի տարր համարվող օգտագործման (կառավարման) իրավազրույթունը ժամանակավոր սահմանափակող միջամտություն է, որը չի խաթարում այդ իրավունքի էությունը:

103. Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ սպառողների շահերի պաշտպանության նպատակով կիրառվող կանխարգելիչ միջոցառումները՝ որպես տնտեսական գործունեության ազատության և սեփականության հիմնական իրավունքներին միջամտություն, սահմանադրաչափ են, հետապնդում են ինչպես ընդհանուր սահմանադրական հիմքեր ունեցող նպատակներ, այնպես էլ կոնկրետ իրավաչափ նպատակներ, բուն սահմանափակումն ամրագրված է ոլորտը կարգավորող օրենքով, որպես օրենսդրական կարգավորումներ սահմանված են բավարար աստիճանի հստակությամբ, ինչը թույլ է տալիս սահմանափակման հասցեատիրոջը դրան համապատասխանեցնելու իր վարքագիծը, կանխատեսելու Օրենքի պահանջները չկատարելու պարագայում՝ վիճարկվող կարգավորումների ուժով Հանձնաժողովի կողմից կիրարկվող միջոցներն ու դրա արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները, ըմբռնելու իրենից ակնկալվող վարքագծի բնույթը և, ըստ այդմ՝ իր վարքագիծը համապատասխանեցնելու օրենսդրական գործող պահանջներին:

104. Սահմանադրական դատարանը, Օրենքի 52.1-ին հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված՝ սպառողների շահերի պաշտպանության նպատակով սահմանված և կիրառվող կանխարգելիչ միջոցառումները դիտարկելով Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համատեքստում, գտնում է, որ Օրենքով սահմանված կանխարգելիչ միջոցառումները որոշակի իրավախախտումների կատարման կապակցությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակներում՝

իրավախախտումների բնույթով և գործի կոնկրետ հանգամանքներով պայմանավորված, կանխարգելիչ նշանակություն ունեցող միջոցառումներ են, որոնք **պիտանի են** հարուցվող վարչական վարույթի անխոչընդոտ ընթացքի ապահովման, անվտանգային ու կենսական նշանակության օբյեկտ հանդիսացող համակարգի անխափան ու բնականոն աշխատանքի երաշխավորման, սպառողների շահերի պաշտպանության, էներգետիկայի բնագավառում ռիսկերի նվազեցման, դրա կայուն ու շարունակական զարգացման ապահովման համար:

105. Վերոնշյալ լեգիտիմ նպատակներից ելնելով՝ Օրենքով սահմանված կանխարգելիչ միջոցառումները որոշակի դեպքերում նաև անհրաժեշտ են սահմանված նպատակներին արդյունավետորեն հասնելու համար, որովհետև դրանց չկիրառելը կարող է լրջագույն սպառնալիքի տակ դնել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հանգեցնել սպառողների լայն շրջանակի իրավունքների կամ օրինական շահերի՝ ընդհուպ անդառնալի հետևանքներով խախտման և այլն:

106. Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանված միջոցառումները՝ որպես առանձին կամ համակցված կիրառված կանխիչ նշանակություն ունեցող միջամտություններ, կոչված են, մի կողմից՝ նպաստելու կամ պայմաններ ստեղծելու հարուցված վարույթի պատշաճ իրականացման, վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած իրավախախտումների քննության և հանգամանքների բացահայտման համար, իսկ մյուս կողմից՝ հետապնդում են էներգետիկայի բնագավառում հանրային շահերի առավել համապարփակ պաշտպանությունը՝ հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի կարևորությունը, հետևաբար՝ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ իրավադրույթները համարժեք միջամտություն են տնտեսական գործունեության ազատության և սեփականության հիմնական իրավունքներին:

107. **Սահմանադրական դատարանն Օրենքի 52.1-ին հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված՝ սպառողների շահերի պաշտպանության նպատակով սահմանված և կիրառվող կանխարգելիչ միջոցառումների՝ Սահմանադրությանը համապատասխանության վերացական ստուգման արդյունքներով գտնում է, որ սահմանված նպատակին հասնելու համար սահմանափակող միջոցները պիտանի են և անհրաժեշտ, ինչպես նաև սահմանափակվող հիմնական իրավունքի/ազատության նշանակությանը համարժեք:**

108. Օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի նշանակմամբ և նրա գործունեության ամբողջ ընթացքում նրան են անցնում լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները՝ բացառելով ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշմամբ սահմանված ժամանակահատվածում լիցենզավորված անձի գործադիր մարմնի լիցենզավորած անձի գործադիր կառավարումն իրականացնելը: Լիցենզավորված անձի ժամանակավոր կառավարչի գործունեության ժամանակահատվածում լիցենզավորված անձի կառավարման այլ մարմիններն իրենց իրավասությունները (լիազորությունները) իրականացնում են ժամանակավոր կառավարչի համաձայնությամբ»:

109. Օրենսդրի կողմից նման մոտեցումը նպատակ է հետապնդում համապատասխան կառուցակարգերի ներդրման միջոցով կանխելու գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումը՝ ապահովելով գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից Օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հարուցված վարչական վարույթի անխոչընդոտ ընթացքը, ինչն էլ վերջնարդյունքում միտված է էլեկտրաէներգետիկական համակարգի բնականոն և անխափան գործունեության շարունակականության երաշխավորմանը:

110. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադարձել է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ այդ առնչությամբ, մասնավորապես, արտահայտելով ներքոնշյալ իրավական դիրքորոշումները. **(1)** *«Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմասպեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների*

ենթադրյալ խախտումներից» (2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշում), **(2)** «(...) դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել է «Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (2015 թվականի դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-1249 որոշում), **(3)** «Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու համար» (2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշում):

111. Դատական պաշտպանության ինստիտուտն իրավունքի գերակայության կենդանի մարմնավորումն է: Այդ համատեքստում, անդրադառնալով Հանձնաժողովի և դրա նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

«Վարչական դատավարության օրենսգրքի՝ **«Վարչական դատարան դիմելու իրավունքը»** վերտառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի իրավունքը՝ Օրենսգրքով սահմանված հիմքերով ու կարգով դիմելու վարչական դատարան, եթե վերջինս համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

112. Այսպիսով, վարչական դատարանին վարչական մարմինների կողմից ընդունված վարչական ակտերի, ինչպես նաև վերջիններիս կողմից դրսևորված գործողության կամ անգործության նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու իրավասություն վերապահելը կոչված է ապահովելու մարդու իրավունքների և օրինա-

կան շահերի և գործադիր իշխանության գործունեության միջև ողջամիտ հավասարակշռվածություն, ուստի՝ վարչական արդարադատության անկյունաքարային խնդիրներից է, ի թիվս այլնի, նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը հանրային իշխանության, այդ թվում նաև՝ ինքնավար մարմինների և դրանց նախագահների ոչ իրավաչափ գործողություններից (կամ անգործությունից) և որոշումներից:

113. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի՝ **«Հանձնաժողովի իրավական ակտերի բողոքարկումը»** վերտառությամբ 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են բողոքարկվել դատական կարգով: Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանը դեռևս 2007 թվականի հունվարի 16-ի ՍԴՌ-673 որոշման շրջանակներում նշել է, որ *«(...) հանձնաժողովի որոշման բողոքարկման հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենքով սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումն է, մասնավորապես՝ հանրային ծառայությունների սակագների դրույքաչափ սահմանելու, փոփոխելու միջոցով, կամ անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելը, այլ՝ հիմնվելով հանրային ծառայությունների բնագավառում Հանձնաժողովի սակագնային և լիցենզավորման (գործունեության թույլտվություն տրամադրող) գործունեության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական և օրենսդրական չափանիշների վրա, այդ մարմնի որոշումների՝ այդ թվում նաև սակագների սահմանման վերաբերյալ, օրինականությունը վերահսկելը»:*

114. Վերոնշյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հաշվի առնելով Հանձնաժողովի բացառիկ իրավասությունը՝ էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում (տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը) և կիրառելու Օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները, ինչը ենթադրում է համապատասխան վարութային որոշումների կայացում, այդ թվում նաև՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառում՝

օրենսդիրը Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման համատեքստում նախատեսել է Հանձնաժողովի ու դրա նախագահի իրավական ակտերի՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորություն:

5.7. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավակարգավորման հետադարձ ուժի վերաբերյալ

115. 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված ՀՕ-196-Ն⁴ օրենքով Օրենքը լրացվել է «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով կանխարգելիչ միջոցառումների կիրառումը» վերտառությամբ 52.1-ին հոդվածով, որի 1-ին մասի երկրորդ նախադասության համաձայն՝ կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, «**ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը**»: Անձի իրավական վիճակի վրա այս իրավակարգավորման բարելավող կամ վատթարացնող ազդեցությունը պարզելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Սահմանադրության 73-րդ հոդվածի լույսի ներքո վերհանել Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ նախադասությունների իրավական բովանդակությունը:

116. Սահմանադրական դատարանն անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժն արգելող սահմանադրական դրույթի առնչությամբ, մասնավորապես, նշել է, որ այդ իմպերատիվ արգելքը «(...) *հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման*

⁴ ՀՕ-196-Ն օրենքի՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերտառությամբ 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «սույն օրենքով սահմանված կարգավորումները տարածվում են նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը թույլ տրված խախտումների վրա»:

վրա: Նման պարտավորություն է ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով» (2008 թվականի հունվարի 15-ի ՍԴՈ-723): Այդ որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքից պետության համար ծագում է պարտականություն՝ երաշխավորելու հիմնական իրավունքների առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:

117. Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «Հասարակական հարաբերությունների այդպիսի ընդհանուր սկզբունքով կարգավորումը կանխատեսելի է և իրավաչափ, քանի որ իրավահարաբերությունների սուբյեկտները՝ օժտված լինելով փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով և ժամանակի մեջ դրանք գործադրելու իրավագործությամբ, ունակ են ձևավորել նորմատիվ պահանջներին համարժեք լեգիտիմ ակնկալիքներ և դրսևորել համապատասխան վարքագիծ, որը, որպես կանոն, հաջորդում է նախապես կանխորոշված այս կամ այն փաստի ծագմանը (առաջացմանը): Այլ է իրավահարաբերությունների բովանդակությունն այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով առաջացած փաստերի հիմքով այնպես է փոխվում դրանք կարգավորող նորմերի բովանդակությունը, որ անձը, գործելով արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների շրջանակներում, ունենալով որոշակի իրավունքներ և պարտականություններ, օրենքի (նորմի) փոփոխման պատճառով հայտնվում է համեմատաբար ավելի վատթար իրավական վիճակում (...):

(...)

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու այնպիսի կանոնների պահպանումը, որոնց գործադրմամբ երաշխավորվեն նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմաններ: Դա Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համարեքստում առավել

կարևոր է հասկապես այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների վարթարացմանը (խստացմանը)» (2018 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1437):

118. Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սահմանված է, որ օրենքի 42-րդ հոդվածի 3, 5 կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարույթ հարուցելու մասին որոշմամբ Հանձնաժողովի նախագահը կարող է կիրառել կանխարգելիչ միջոցառումներ, իսկ 52.1-ին հոդվածի 2-րդ մասը թվարկում է կիրառվելիք կանխարգելիչ միջոցառումները:

Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ մեկ անգամ ևս ուշադրություն է հրավիրում նախորդիվ արդեն պատճառաբանված այն եզրակացության վրա, որ Օրենքի 52.1-ին հոդվածով սահմանված կանխարգելիչ միջոցառումներն իրավական պատասխանատվության միջոցներ չեն: Էներգետիկայի բնագավառում իրավախախտումների օբյեկտիվ կողմի նկարագրությունն ու Հանձնաժողովի կողմից դրանց համար կիրառվող պատասխանատվությունը 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-196-Ն օրենքի ընդունմամբ մնացել է անփոփոխ, ինչը նշանակում է, որ նշյալ օրենքով չի սահմանվել անձի իրավական վիճակը վատթարացնող պատասխանատվություն ենթադրող որևիցե դրույթ, այլ ընդամենը սահմանվել է սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների շրջանակ, որոնցից յուրաքանչյուրի կիրառման համաչափության ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը:

119. Մյուս կողմից՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընդհանրապես իրավական պատասխանատվության, ինչպես նաև այդ առնչությամբ վարույթների ընթացքում կանխարգելման կամ խափանման միջոցներ կիրառելու իրավական սկզբունքներից է դրանց անհատականացումը, ինչից հետևում է, որ իրավակիրառը համապատասխան վարույթներով պետք է հնարավորություն ունենա հաշվի առնելու կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, մեղմացնող կամ ծանրացնող և այլ հանգամանքները: Թվարկվածներից «**խախտողի անձի**» բնութագրերը ենթադրում են

բազմաթիվ հանգամանքներ, ներառյալ՝ «նախկինում կատարված խախտումների քանակը, դրանց հաճախականությունը կամ բնույթը»:

120. Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը խնդրո առարկա իրավա-կարգավորումը դիտարկում է ոչ թե որպես օրենքով սահմանված նոր կարգավորում, որի վրա տարածվում են Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի երաշխիքները, այլ անհատականացման սկզբունքի պահանջներից բխող «խախտողի անձ» ընդհա-նուր հասկացության կոնկրետացում՝ հաշվի առնվելիք հանգամանքների որոշակի շրջանակի սահմանման միջոցով:

121. Վարչական վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացած իրավա-խախտման կոնկրետ առանձնահատկություններով պայմանավորված՝ կարող են ի հայտ գալ բազմաթիվ հանգամանքներ ու գործոններ, որոնք, վարույթի պատշաճու-թյան, արդյունավետության, բազմակողմանիության, լրիվության, օբյեկտիվության ապահովման նկատառումներից ելնելով, կպահանջեն օրենքով սահմանված կան-խարգելիչ միջոցառումներից մեկի կամ մի քանիսի միաժամանակյա կիրառումը: Այս համատեքստում Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը հնարավորություն է տալիս, ի թիվս այլնի, հաշվի առնել նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, հետևաբար՝ այն իրավակիրառողից պահանջում է կանխարգելիչ միջոցա-ռումների կիրառման նպատակահարմարության հիմքում դնել (հաշվի առնել) նաև այդ հանգամանքները:

122. Սահմանադրական դատարանը հարկ է համարում ևս մեկ անգամ արձա-նագրել, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասում թվարկված միջոցառումները կրում են կանխարգելիչ բնույթ, քանի որ դրանցից յուրաքանչյուրի ինչպես առանձին, այնպես էլ համակցված կիրառումը հետապնդում է մեկ միասնական նպատակ՝ երաշխավորել էներգետիկայի բնագավառում հանրային շահերի առավել համապարփակ պաշտպա-նությունը՝ հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի կարևորությունն ու այդ բնագավառի նկատմամբ պետության՝ ի դեմս Հանձնաժողովի նախագահի, միջամտու-թյան անհրաժեշտությունն ու չափավորությունը (համաչափությունը), որպիսի պայման-

ների ապահովմանն էլ միտված է լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը հաշվի առնելու օրենսդրական հնարավորությունը:

123. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունն այնքանով, որքանով սահմանում է, որ կանխարգելիչ միջոցառումների կիրառման դեպքում, ի թիվս այլնի, հաշվի են առնվում նաև լիցենզավորված անձի կողմից նախկինում կատարված խախտումների քանակը, հաճախականությունը կամ բնույթը, չի հակասում Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սկզբունքին:

5.8. Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի կոլեգիալության վերաբերյալ

124. Սահմանադրության «**Ինքնավար մարմինները**» վերտառությամբ 122-րդ հոդվածն ամրագրել է ինքնավար մարմինների ստեղծման և կարգավիճակի հետևյալ տարրերը՝ **(1)** ինքնավար մարմինների ստեղծման միասնական նպատակներն են՝ «հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման ապահովումը», ինչպես նաև «Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանությունը», **(2)** ինքնավար մարմինների ստեղծման վերաբերյալ օրենքներն ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, **(3)** ինքնավար մարմինների անդամները նշանակվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, **(4)** ինքնավար մարմիններին օրենքով կարող է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն, **(5)** ինքնավար մարմինների լիազորությունները, անկախության երաշխիքները, անդամներին ներկայացվող պահանջները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով:

125. Նշված սահմանադրական չափորոշչին համապատասխան՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 4-րդ հոդվածը հանրային ծառայությունների ոլորտում իրականացվող կարգավորումը բնորոշում է որպես

պետական քաղաքականության մի մաս «(...) որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավասությունների իրականացմամբ ոլորտային ռազմավարական քաղաքականությանը համահունչ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց (այսուհետ՝ կարգավորվող անձինք) շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը»:

126. Ինքնավար մարմինների ստեղծման և գործունեության սահմանադրական վերոբերյալ կարգավորումներին համապատասխան՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որը՝ որպես ինքնավար պետական մարմին, ստեղծվում է օրենքով սահմանված կարգով և գործում է Սահմանադրությանը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան ու ինքնուրույն է իր իրավասություններն իրականացնելիս:

127. Հանձնաժողովի ինքնավարության և անկախության երաշխավորման համար «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը նախատեսել է Հանձնաժողովի կազմավորման, գործունեության կազմակերպագործառնական, իրավասությունների իրականացման, ֆինանսական տարատեսակ երաշխիքների համակարգ:

128. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հանձնաժողովի կազմավորման և իրավասության իրականացման գործընթացում կոլեգիալության սկզբունքի դրսևորման և իրավական բովանդակության առանձնահատկություններին՝ ելնելով Դիմողի բարձրացրած խնդիրների և այդ առնչությամբ ներկայացված հիմնավորումների բովանդակությունից:

129. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության 122-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ինքնավար մարմինների գործունեության կարգը սահմանվում է օրենքով, ինչից հետևում է, որ ինքնավար մարմինների, տվյալ դեպքում՝ Հանձնաժողովի գործունեության կարգի սահմանումը գտնվում է օրենսդրի՝ Ազգային

ժողովի իրավասության տիրույթում: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության համաձայն՝ Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ Հանձնաժողովի նախագահ և չորս անդամ, իսկ 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Հանձնաժողովն օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ՝ նիստում, իսկ հիշյալ օրենքով նախատեսված դեպքերում՝ գրավոր քվեարկությամբ:

130. Ինքնավար մարմնի կոլեգիալությանն առնչվող օրենսդրական կարգավորումների սահմանադրականության գնահատման համար էական նշանակություն ունի ինքնավար մարմնի կողմից ընդունվող որոշումների բնույթն ու տեսակը: Ինքնավար մարմնի կողմից ընդունվող որոշման՝ այդ մարմնի գործունեության ընթացակարգային/վարութային կառուցակարգում ունեցած տեղից ու իրավաբանական նշանակությունից է կախված այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք տվյալ իրավակարգավորումը հակասում է ինքնավար մարմնի կազմավորման ու գործունեության (որոշումների ընդունման) կոլեգիալության սկզբունքին, թե՞ ոչ:

131. Վարութային որոշումները, ըստ վերջիններիս ընդունման ժամանակի և գործով հետագա ընթացքի վրա ազդեցության (որոշակի վարութներում նաև նյութաիրավական վեճի լուծման հետ փոխկապվածության), լինում են նախնական (սկզբնական), միջանկյալ և վերջնական կամ եզրափակիչ որոշումներ: Նախնական վարութային որոշումները սկզբնավորում են վարութը, միջանկյալներն ընդունվում են վարութի որոշակի փուլի շրջանակում՝ նախապատրաստող, ապահովող կամ կազմակերպական պայմաններ ստեղծելով վարութը եզրափակելու համար: Վերջնական կամ եզրափակիչ վարութային ակտերն ավարտում են վարութը (լուծում են գործն ըստ էության): Վարութային որոշումների հիշյալ տեսակները կարևոր նշանակություն ունեն դրանց ընդունման կարգի սահմանադրականության գնահատման մեթոդաբանության համար:

132. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի՝ «**Հանձնաժողովի որոշումները**» վերտառությամբ 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն օրենքով վերապահված իրավասությունների սահմաններում ընդունում է հետևյալ որոշումները՝ **ենթաօրենսդրական նորմատիվ, անհատական, ներքին իրավական ակտեր:** Թվարկելով Հանձնաժողովի ընդունած վերջնական

որոշումների տեսակները՝ հիշյալ օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է դրանց ընդունման կարգը, այն է՝ նիստում կամ գրավոր քվեարկությամբ, այսինքն՝ այդ իրավակարգավորումները վերաբերում են միայն եզրափակիչ որոշումների քվեարկությամբ (նիստում կամ գրավոր) ընդունմանը:

133. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 3, 5 կամ 6-րդ մասերով սահմանված արարքը կատարելու հիմքով վարչական վարույթ հարուցելու և Օրենքի 52.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կանխարգելիչ միջոցառումները կիրառելու իրավասությունը Հանձնաժողովի նախագահին վերապահելու օրենսդրական ընդհանուր հիմքը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն է, համաձայն որի՝ Հանձնաժողովի նախագահն իրավասու է «իրականացնել օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»:

134. Վարչական վարույթ հարուցելու և կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու մասին Հանձնաժողովի նախագահի որոշումներն ընդունվում են այն բացառիկ իրավիճակներում, երբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով Կառավարության լիազոր մարմնի կողմից ներկայացվում է հաղորդում, որով առերևույթ հիմնավորվում է, որ վտանգվել է կամ կարող է վտանգվել էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, կամ հավանական խախտումը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման կամ լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման և որպիսի հետևանքների կանխումն անհրաժեշտաբար պահանջում է անհապաղ միջամտություն:

135. Սահմանադրական դատարանը փաստում է, որ թեև քննարկվող դեպքում վարչական վարույթ հարուցող և կանխարգելիչ միջոցառումներ կիրառող իրավասու սուբյեկտը Հանձնաժողովի նախագահն է, այդուհանդերձ, վերջինիս կողմից՝ վարչական վարույթ հարուցելու որոշման հիմքում ընկած առերևույթ իրավախախտման վերաբերյալ հիմնավորումների ու փաստերի առնչությամբ իրականացվող վարույթի ընթացիկ և եզրափակիչ փուլերն ամբողջությամբ գտնվում են Հանձնաժողովի կոլեգիալ կազմի իրավասության տիրույթում: Այլ կերպ՝ Հանձնաժողովի նախագահի կողմից

հարուցված վարչական վարույթի «ճակատագիրը» որոշվում է բացառապես Հանձնաժողովի կողմից կազմով, ինչը ենթադրում է նաև Հանձնաժողովի նախագահի կողմից հարուցված վարչական վարույթը՝ համապատասխան օրենսդրական հիմքերի առկայության պարագայում, Հանձնաժողովի կողմից կարճելու տարբերակը:

136. Սահմանադրական դատարանն ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված «հնարավոր իրավախախտման վերաբերյալ հաղորդում», 9-րդ մասով՝ «առերևույթ հիմնավորում», «հավանական խախտում» ձևակերպումները չեն կարող առաջացնել իրավակարգավորման անորոշության խնդիրներ Սահմանադրության 79-րդ հոդվածի համատեքստում: Այդ ձևակերպումները շեշտադրում են այն հանգամանքը, որ Կառավարության լիազոր մարմնի հաղորդմամբ առաջ քաշված իրավախախտման հիմնավորումներն ընդամենը նախնական և ենթադրվող վարկած են, որոնց առկայությունը կամ բացակայությունը հաստատվելու է բացառապես Հանձնաժողովի կողմից՝ վարույթի ըստ էության քննության փուլում և արձանագրվելու է Հանձնաժողովի վերջնական (եզրափակիչ) որոշման մեջ:

137. Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասն այնքանով, որքանով Հանձնաժողովի նախագահին վերապահում է Կառավարության լիազոր մարմնի հաղորդման հիման վրա վարչական վարույթ հարուցելու և համապատասխան դեպքերում կանխարգելիչ միջոցառումներ կիրառելու լիազորություն, համահունչ է Սահմանադրության 122-րդ հոդվածին:

138. Ամփոփելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը, 27-րդ հոդվածի 2.1-ին մասը, 52.1-ին հոդվածի 1-3-րդ մասերը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը՝ Դիմողի ներկայացրած հիմնավորումների շրջանակում Սահմանադրությանը համապատասխանության վերացական ստուգման արդյունքներով, համապատասխանում են Սահմանադրությանը: Միևնույն ժամանակ, խնդրո առարկա նորմերի՝ կոնկրետ գործերի շրջանակներում մեկնաբանությունը եռաստիճան դատական համակարգի դատարանների իրավասության տիրույթում է:

Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա սույն որոշման մեջ տեղ գտած իրավական դիրքորոշումներին համահունչ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի «գ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 1-ին, 2 և 3-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

4. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

12 մարտի 2026 թվականի
ՍԴՈ-1819